

«Ա ր փ ի մ ե ղ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Դեղագործական գործարանի կառուցում և
շահագործում

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն

Կատարող՝ «Քոնսեկորդ» ՍՊԸ
Տնօրեն՝
Վ.Թևոյան



Երևան - 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	4
2.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ	5
2.1.	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանն ու կառավարմանն առնչվող ՀՀ օրենսդրությունը և միջազգային պարտավորությունները	5
2.2.	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացը	6
3.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	7
3.1.	Տեղադիրքը	7
3.2.	Ռելիեֆը, լանդշաֆտը	11
3.3.	Երկրաբանություն	12
3.4.	Կլիմա	12
3.5.	Սեյսմիկ պայմանների բնութագիրը	15
3.6.	Հողերը	17
3.7.	Ջրային ռեսուրսներ	18
3.8.	Մթնոլորտային օդ	19
3.9.	Կենսաբազմազանություն	20
	3.9.1 Բուսական աշխարհ	21
	3.9.2 Կենդանական աշխարհ	22
	3.9.3 Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ	22
3.10.	Ազդակիր համայնքը	22
3.11.	Պատմության և մշակույթի հուշարձանները	23
4.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ	25
4.1.	Գոյություն ունեցող վիճակը	25
4.2.	Շինարարության փուլ	25
4.3.	Շահագործման փուլ	30
5.	«Ջրոյական» և այլընտրաբային տարբերակներ	33
6.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	34
6.1.	Շինարարական աշխատանքներ	34
	6.1.1 Օդի աղտոտում	34
	6.1.2 Աղմուկի և թրթռումների ազդեցություն	35
	6.1.3 Ջրօգտագործում	35
	6.1.4 Ջրահեռացում	37
	6.1.5 Ազդեցությունը հողածածկի վրա	37
	6.1.6 Ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա	37
	6.1.7 Սոցիալական ազդեցությունը	38
6.2.	Շահագործման փուլ	38
	6.2.1 Օդի աղտոտում	38

6.2.2.	Գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ	39
6.2.3.	Ջրօգտագործում և ջրահեռացում	41
6.2.4.	Թափոններ	45
7.	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿ	47
8.	ԱՂՏՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	49
8.1.	Բնապահպանական ռիսկեր	49
8.1.1.	Մթնոլորտային օդ	49
8.1.2.	Ջրային ռեսուրսներ	49
8.1.3.	Հողային ռեսուրսներ	50
8.1.4.	Կենսաբազմազանություն	50
8.1.5.	Պատմամշակութային միջավայրը	50
8.1.6.	Սոցիալական ազդեցությունը և ռիսկերը	50
8.1.7.	Գումարային (հավաքական) ազդեցություն	52
8.2.	Բնապահպանական և սոցիալական մեղման միջոցառումներ	52
8.2.1.	Շինարարության փուլ	52
8.2.2.	Գործարանի շահագործման փուլ	55
8.2.3.	Առողջապահական խնդիրներ	56
9.	ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕԴԵՐՆՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ	56
10.	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ /ԲԿՊ/	58
11.	“ԱՐՓԻՄԵՐ” ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ	65

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում «Արփիմեդ» ՍՊԸ-ն, որը նոր սերնդի ժամանակակից հայկական դեղարտադրող ընկերություն է՝ դեղագործական շուկայի զարգացման առաջադեմ տենդենցներով և համապատասխանում է որակի ու կառավարման ժամանակակից չափանիշներին:

«Արփիմեդ» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2001 թվականին: Ընկերությունն արտադրում է դեղեր, ստոմատոլոգիայում օգտագործվող պրոֆիլակտիկ և բուժիչ միջոցներ, հականեխիչ և ախտահանիչ լուծույթներ, դիագնոստիկ և կոսմետիկական միջոցներ, ինչպես նաև անասնաբուժական պրակտիկայում օգտագործվող դեղեր: «Արփիմեդ»-ը արտադրում է ավելի քան 150 անուն դեղամիջոց, որոնց 65 տոկոսն ընդգրկված է ՀՀ հիմնական դեղերի ցանկում:

Իր տեխնոլոգիական չափորոշիչներով ընկերությունը համապատասխանում է միջազգային ՊԱԳ (GMP, Good Manufacturing Practice) չափանիշներին և ունի հավաստագիր՝ տրված Ուկրաինայի Դեղերի պետական ծառայության կողմից, որը հաստատում է համապատասխանությունը Պատշաճ արտադրական գործունեության ԵՄ (GMP EU) և PIC/S պահանջներին:

«Արփիմեդ» ՍՊԸ-ն ունի Որակի կառավարման միջազգային ստանդարտի (ISO 9001:2008) և Պատշաճ արտադրական գործունեության (GMP) հավաստագրեր՝ տրամադրված գերմանական «TUV Rheinland» և ֆրանսիական «AB Certification» ընկերությունների կողմից:

Արտադրությունը և որակի հսկման լաբորատորիան հազեցված են ժամանակակից արտադրական և անալիտիկ սարքավորումներով, չափիչ սարքերով և ռեակտիվներով: Բացի ներքին շուկայից, ընկերության արտադրանքը ներկայացված է նաև արտերկրում:

Արտադրանքի տեսականու ընդարձակման, որակական հատկանիշների կատարելագործումը և տեխնոլոգիական առաջընթացը առաջացնում են անհրաժեշտություն ընդարձակել ընկերության արտադրական կարողությունները:

Այս նպատակով ընկերությունը մտադիր է Կոտայքի մարզի Բալախովիտ համայնքում կառուցել ժամանակակից պահանջներին համապատասխանող նոր գործարան:

Գործարանը կառուցվում է դեղագործական արտադրության ընդլայնման, նոր տեխնոլոգիաների ներդրման, արտադրության նոր ուղղությունների բացման, արտադրանքի պահեստավորման ու լոգիստիկայի պայմանների բարելավման, աշխատակազմի արտադրական և աշխատանքային պայմանների բարելավման և այլ նպատակներով:

Ընկերության հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Աբովյան, 2-րդ միկրոշրջան, 19 շենք
Հեռ.՝ (0222) 2-17-03
Ֆաքս՝ +374 (222) 2-19-24
Էլ. հասցե՝ info@arpimed.com
Կայք՝ www.arpimed.am

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ

2.1. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանն ու կառավարմանն առնչվող ՀՀ օրենսդրությունը և միջազգային պարտավորությունները

Ընկերությունը բնապահպանության բնագավառում իր գործողություններում առաջնորդվելու է ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության պահանջներով:

Դրանք են՝

- ՀՀ Հողային օրենսգիրք /02.5.2001թ./
- ՀՀ Ջրային օրենսգիրք /04.6.2002թ./
- ՀՀ Վարչական իրավախախտումների մասին օրենսգիրք /06.12.1985թ./, գլուխ 7
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք /23.11.1999 թ./
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք /03.4.2000թ./
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին» ՀՀ օրենք /11 11 1998 թ.
- «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք /11.4.2005 թ./
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք /27.11 2006 թ./
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք /01.11.1994թ./
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք /21.06.2014թ./
- ՀՀ օրենքը «Թափոնների մասին» /2004 թ./
- «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջների տեխնիկական

կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 02 11 2017 թ. N 1404-Ն որոշում

- «Վտանգավոր քիմիական թափոնների գործածությունը, վտանգավոր քիմիական նյութերի պահպանմանը և փոխադրմանը ներկայացվող հիգիենիկ պահանջները N 2.1.7. 001-09 » ՀՀ առողջապահության նախարարի 29 10 2009 թ. N 20 հրաման

Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ կապված շրջակա միջավայրի կառավարման խնդիրների հետ՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության <http://www.mnp.am/?p=201> համացանցային կայքում առկա ցանկով: Ցանկում ներառված է նաև ՄԱԿ-ի ԵՏՀ Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներն ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիան /Օրհուս, 1998թ./:

2.2. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջով /այսուհետև՝ օրենք/ փորձաքննության ենթակա նախաձեռնության իրականացումից առաջ անհրաժեշտ է շրջակա միջավայրի գնահատման փորձաքննության դրական պետական եզրակացություն, որը տրվում է *լիազոր մարմնի* /ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության/ կողմից: Օրենքի հոդված 14-ի 4. կետի 4) ենթակետի /դեղագործական արտադրության բնագավառում՝ ա. Դեղանյութերի արդյունաբերական արտադրություն/ *նախատեսվող գործունեությունը* դասակարգվում է որպես շրջակա միջավայրի վրա ազդեցության **Ա կատեգորիայի** գործունեություն: Իսկ հոդված 14-ի 6 կետի 7) ենթակետի /քաղաքաշինության բնագավառում, քաղաքաշինական կառույցներ 1500 քմ-ից ավելի կառուցապատման մակերեսով/՝ դասակարգվում է **Գ** կատեգորիայով: ՇՄԱԳ փաստաթուղթը կազմվում է առավել բարձր կատեգորիայի համար / **Ա** կատեգորիայի/:

Ա կատեգորիայի գործունեության դեպքում պետական փորձաքննական եզրակացություն ստանալու /կամ մերժվելու/ գործընթացը կատարվում է երկու՝ *նախնական և հիմնական գնահատման փուլերով*, որի ընթացքում տեղի են ունենում 4 *հանրային լսումներ* /քննարկումներ/: Փորձաքննության գործընթացը մեկնարկում է հանրային լսումներին նախնական գնահատման հայտի ներկայացմամբ, որը պարունակում է նախատեսվող գործունեության և գործունեության տարածաշրջանի շրջակա միջավայրի առկա իրավիճակի մասին հակիրճ /նախնական/ տեղեկատվություն, նախատեսված գործունեության բնապահպանական ազդեցության և այդ ազդեցության մեղմման համար նախատեսվող միջոցառումների մասին

տեղեկատվություն: Նախաձեռնողը կազմակերպում է առաջին հանրային լսումները *ազդակիր համանյքներում* և լսումների արձանագրության հետ նախնական գնահատման հայտը ներկայացնում է փորձաքննական կենտրոն, որն իրականացնում է նախնական հայտի ուսումնասիրությունը: Այնուհետև փորձաքննական կենտրոնը կազմակերպում է 2-րդ հանրային լսումները, կայացնում է նախատեսվող գործունեության դասակարգման /կատեգորիայի/ վերաբերյալ որոշում և *ձեռնարկողին* տրամադրում է տեխնիկական առաջադրանք:

Նախաձեռնողը մշակում է Շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման հիմնադրույթային փաստաթուղթը /այսուհետև՝ ՇՄԱԳ/, կազմակերպում է 3-րդ հանրային լսումները և ներկայացնում է ՇՄԱԳ հաշվետվությունը ու լսումների արդյունքները լիազոր մարմնին հիմնական փորձաքննության համար: 4-րդ հանրային լսումներին ներկայացվում է հանրային լսումների դիտողությունների հաշվառումով լրամշակված ՇՄԱԳ-ը, որի հիման վրա էլ լիազորված մարմինը տալիս է պետական փորձաքննական /դրական կամ բացասական/ եզրակացություն:

Հանրային ծանուցման և լսումների /քննարկումների/ իրականացման կարգը կարգավորվում է ՀՀ կառավարության 19 11 2014 N1325-Ն որոշումով:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Տեղադիրքը

Բալախովիտ համայնքը գտնվում է Կոտայքի սարավանդում, որը տարածվում է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորտը: Հյուսիսից Կոտայքի սարավանդը սահմանափակում է Գուրնասարը /2299 մ/, հյուսիս-արևելքից՝ Հատիս /2528 մ/ լեռնազանգվածը: Հարավ-արևմուտքում աստիճանաբար ցածրանալով ձուլվում է Արարատյան դաշտին, արևելքում առաջացնում է Ավանի գոգավորությունը, ապա՝ Գետառ և Ջրվեժ գետերի ջրբաժանը: Արևմուտքում ձգվում է Հրազդանի կիրճը, իսկ հարավում՝ Նորքի բարձրությունը: Կոտայքի սարավանդի ռելիեֆը մեղմ-ալիքավոր է, տեղ-տեղ բարձրանում են 50-60 մ հարաբերական բարձրությամբ մնացորդային բլուրներ և խարամային կոներ: Ծածկված է Գեղամա լեռնաշղթայի հրաբուխներից արտավիժված լավաներով ու տուֆերով, որոնք ընդարձակ աստիճաններով Ողջաբերդի լեռնաբազուկից ձգվում են դեպի Գետառի այլուվիալ հովիտը: Թեք ու անտառազուրկ լանջերին շատ են հեղեղատները ու փոքրիկ հովիտները: Զգալի տարածում ունեն քարակարկառները: Տարածքում տեղանքի թեքությունները մեծ չեն՝ 8°-ի սահմաններում, ինչը հնարավորություն է տալիս մշակելի դարձնել հողը փոքրիկ

հանդակներով: Մշակաբույսեր աճեցվում են բացարձակապես ոռոգվող հողերում: Անասնապահությունը հնարավոր է միայն բարձրադիր լեռնալանջերին փոված արոտավայրերի և խոտհարքների շնորհիվ:

Կոտայքի սարավանդը կազմված է վերին պլիոցենի և պլեյստոցենի լավաներից, լճային նստվածքներից և ժամանակակից ալյուվիալ-պրոլյուվիալ գոյացումներից: Ունի դեպի արևմուտք և հարավ-արևմուտք ընդհանուր թեքություն, 1200—1500 մ բարձրություն, թույլ մասնատված, լավային ալիքավոր մակերևույթ: Հյուսիս-արևելքում, Գեղամա լեռների լավաների տարբեր ծածկույթների կարերից բխում են Քառասունակն աղբյուրները: Կոտայքի սարավանդի հիմքում (Ավանի գոգավորության սահմաններում) կան կերակրի աղի հանքավայրեր: Հայտնի է Կապուտանի երկաթի և Ջրաբերի պեռլիտի հանքավայրերը: Բալահովիտում արդյունահանվում է հրաբխային խարամ /շլաք/ և բազալտ:


„Արփիմեդ,, գործարանի համար հատկացված տարածքը գտնվում է Բալահովիտ գյուղական համայնքի հյուսիսային մասում՝ արդյունաբերական գոտում: Տարածքի ծայրակետերի կորդինատները ARM WGS-84 կորդինատային համակարգով հետևյալն են. 38T U-466523.71mE և 4456773.28mN, Բ- 466748.21mE և 445928,49mN, Գ-466784.28mE և 4456876.87 mN, Դ-466784.28 mE և 4456876.87 mN:

Հեռավորությունը Ակունք գետի հունից՝ 510 մ, բնակելի թաղամասերից՝ 660 մ դեպի հյուսիս-արևելյան կողմը գտնվող տները, 530 մ դեպի հարավ-արևելյան կողմի տները:

Ներկայացվում է տարածքի լուսանկարը Google Earth ծրագրով /նկ. 1/ և իրադրային սխեման /նկ.2/:



Նկ. 1 “Արփիմեդ” դեղագործական նոր գործարանի կառուցման տարածքի իրադրային լուսանկարը Google Earth ծրագրի լուսանկարով



Նկար 2. Իրադրային սխեմա

3.2. Ռեզիլիենտ, լանդշաֆտը

“Արփիմեդ” գործարանի համար հատկացված տարածքը Հատիս հրաբխային լեռնազանգվածի հարավ-արևելյան լավային բազուկներից մեկի ստորոքոտում գտնվող փոքրիկ այլուվիալ բերվածքներից առաջացած հարթավայր է, հյուսիսից սեղմված լավայի բազուկին, հարավից ընդարձակվելով դեպ Ակունք գետի նեղ գետահովիտը: Տարածքը հարթ է, հորիզոնականին մոտիկ թեքությամբ:

Տարածքի լանդշաֆտը կիսանապատային լեռնային տափաստան է, որը անտրոպոգեն ազդեցությամբ ձևափոխվել է, հերկվել է, ապա ենթարկվել մասնակի կառուցապատման:



Նկ. 2 “Արփիմեդ” Բալահովիտի դեղագործական գործարանի ընդհանուր տարածքը

“Արփիմեդ” գործարանի շինարարության տարածքը չի համընկնում բնության հատուկ պահպանվող տարածքների, Բալահովիտ համայնքի կանաչ գոտիների հետ, տարածաշրջանը բնապահպանական առանձնահատկություն չի ներկայացնում, այնտեղով չեն անցնում կենդանիների միգրացիոն ուղիներ:

3.3. Երկրաբանություն

Կոտայքի սարավանդը կազմված է վերին պլիոցենի և պլեյստոցենի լավաներից, լճային նստվածքներից և ժամանակակից այրովիալ-պրոլյուվիալ գոյացումներից: Ունի դեպի արևմուտք և հարավ-արևմուտք ընդհանուր թեքություն, 1200—1500 մ բարձրություն, թույլ մասնատված, լավային ալիքավոր մակերևույթ: Հյուսիս-արևելքում, Գեղամա լեռների լավաների տարբեր ծածկույթների կարերից բխում են Քառասունակն աղբյուրները: Կոտայքի սարավանդի հիմքում (Ավանի գոգավորության սահմաններում) կան կերակրի աղի հանքավայրեր: Հայտնի է Կապուտանի երկաթի և Ջրաբերի պեռլիտի հանքավայրերը: Բալահովիտում արդյունահանվում է հրաբխային խարամ /շլաք/ և բազալտ:

3.4. Կլիմա

Կոտայքի սարավանդի կլիման ըստ բարձրության փոխվում է չոր ցամաքայինից մինչև ձյունամերձը: Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջանի կլիման արտահայտվում է չափավոր ցուրտ ձմեռներով և տաք ամառներով, տարեկան տեղումները՝ 400—500 մմ: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը $10,0^{\circ}$ -ի, հունվարին $4,5-5,0^{\circ}$ -ի, իսկ հուլիսին՝ $22, 2^{\circ}$ -ի սահմաններում է: Անսառնամանիք օրերի թիվը շուրջ 200 է, կայուն ձնածածկը՝ 69 օր:

Բալահովիտում չկա օդերևութաբանական կայան, մոտակա օդերևութաբանական կայանները գտնվում են Մայակովսկի գյուղում, Արզնի քաղաքում և Եղվարդ ավանում: Ստորև բերված են Արզնի օդերևութաբանական կայանի դիտարկումների կլիմայական պայմանների տվյալները:

Քամու վարդի տվյալները ներկայացվում են Եղվարդի օդերևութաբանական կայանի տվյալներով, քանի որ ավելի մոտիկ տեղադրված Մայակովսկու և Արզնու կայանները չեն ներկայացնում քամու տվյալներ:

Եղվարդի օդերևութաբանական կայանի տվյալներով քամիները տարածաշրջանում խիստ ուղորդված են հյուսիս-արևելքից դեպի հարավ – արևմուտք ուղությամբ: Գերակշռում են Սևանա լճից և Գեղամա լեռներից փչող քամիները /նկ. 2/:

ՀՀ կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզում Բալահովիտ համայնքը գտնվում է “Չափավոր” կլիմայական գոտում /նախալեռնային շրջաններ/, որտեղ կլիմայի հիմնական պատկերը հետևյալն է. ամառ՝ տաք, խոնավ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C ից մինչև 20°C , հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին) 45-60%, բարենպաստ քամիներ, քամու միջին արագությունը՝ 2.0-3.0 մ/վ: Ձմռանը՝ չափավոր ցուրտ է, թույլ քամիներով և օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հունվարին 0°C -ից մինչև մինուս 5°C , հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 50-70%, քամու միջին արագությունը՝ 3.0-5.0 մ/վ:

Աղյուսակ 3.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Արզնիի օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայան	Օդերևութաբանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C ⁰												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արզնի	1262	4.5	-2.5	2.8	9.5	14.2	18.7	21.3	21.3	18.2	11.5	4.9	-1.3	9.7	-28	38

Աղյուսակ 3.2. Օդի հարաբերական խոնավությունը Արզնիի օդերևութաբանական կայանի տվյալներով

	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Արզնի	1262	74	67	65	64	58	53	49	57	65	74	79	65	-	-	

Աղյուսակ 3.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը Արզնիի օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայան	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Ձնածածկույթ, մմ			
	Ըստ ամիսների												տարեկան	Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը	Տարվա ձնածածկույթի օրերը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12				
Արզնի	34	43	44	58	77	40	25	16	26	34	40	38	475	69		
	14	20	23	33	30	24	30	23	42	25	19	39	42			


Աղյուսակ 3.4. Քամու պարամետրերը ըստ Եղվարդի օդերևութաբանական կայանի տվյալների

1	2	3	Կրկնելիություն, % միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների									12	13	14	15	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում		
			4	5	6	7	8	9	10	11	20					50	100	
																		16
Եղվարդ	936	հունվար	6	48	11	3	15	6	9	2	40	1,1	2,6	29	24	29	34	
			1,7	1,8	1,7	1,5	1,7	1,9	1,8	1,7								
		Ապրիլ	5	48	7	3	17	10	8	2	23	2,6						
			3,0	3,8	2,7	2,4	2,4	2,8	2,7	2,1								
		Հուլիս	6	73	4	1	7	4	4	1	11	4,8						
			4,9	5,5	4,9	1,7	3,0	2,5	3,0	1,8								
		Հոկտեմբեր	5	55	6	3	16	8	6	1	31	1,9						
			2,8	3,1	2,1	1,9	1,9	2,3	1,8	2,2								

3.5. Սեյսմիկ պայմանների բնութագիրը

Բալահովիտ համայնքը գտնվում է Հայաստանի երկրաշարժային համեմատաբար կայուն գոտում: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Բալահովիտին ամենամոտիկ խորքային տեկտոնական խզվածքը /Գառնիի խզվածքը/, որը մոտավորապես անցնում է Սպիտակ քաղաք-Վայոց ձորի մարզի Արենի գյուղ գծով, Բալահովիտից հեռու է /դեպի արևելք/ 3-5 կմ, բայց ամենակարևորը, Բալահովիտի շրջակայքում ակտիվություն չի ցուցաբերում: Տարածաշրջանում գրանցված վերջին հզոր երկրաշարժը, որի էպիկենտրոնը Գառնին էր / $M=6,9$ մագնիտուտով/, տեղի է ունեցել 1679 թվականին, որի էպիկենտրոնը Բալահովիտից գտնվում է մոտ 24 կմ դեպի հարավ-արևելք:

Կազմված է ՀՀ *սեյսմիկ գոտիավորման* սխեմատիկ քարտեզը, որով Հայաստանի տարածքը գոտիավորված է ըստ միևնույն մեծության սեյսմիկ վտանգի աստիճանի: Համաձայն այդ քարտեզի Բալահովիտին վերագրվում է $a=0.3g$ *գրունտի հորիզոնական արագացում* / $v=30$ սմ/վրկ² /գրունտային ստվարաշերտի վերին մակերևույթի վրա երկրաշարժի ժամանակ առաջացած արագացման մեծությունը հորիզոնական ուղղությամբ/, որը համարժեք է մինչև 9 բալ երկրաշարժի ուժգնության:




Նկ. 3 ՀՀ և տարածաշրջանի խորքային բեկվածքների տեղադրությունը

ՀՀ Շինարարության նախարարի ՀՀՇՆ II-6.02-2006 հրամանով սահմանվում է այն չափանիշները, որոնք պետք է դրվեն շենքերի ու կառուցվածքների նախագծման ու կառուցման ընթացքում /սեյսմակայունության հիմնական սկզբունքներ/: Սեյսմակայուն շինարարությունը իրականացվում է տարբերակված՝ երեք, ըստ ուժգնության աճող հաջորդականությամբ՝ 1, 2, 3 սեյսմիկ գոտիներում, որոնց համար *գրունտի հորիզոնական արագացման* մեծությունը համապատասխանաբար 20, 30 և 40 սմ/վրկ² է: Նույն հրամանի հավելվածում ներկայացված է ՀՀ բնակավայրերի ցուցակը ըստ սեյսմիկ գոտիների: Այդ ցուցակում Աբովյան քաղաքը /Բալահովիտի հարևանությամբ/ բնակավայրերը գտնվում են 2-րդ սեյսմիկ գոտում:

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարի 12 02 2013թ N 100-Ն հրամանով սահմանվում է սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կազմակերպման և իրականացման դրույթները, համաձայն որոնց մշակվում են սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզներ, որոնք դրվում են մարզերի և համայնքների զարգացման ծրագրերի, քաղաքաշինական փաստաթղթերի մշակման հիմքում: Այդ քարտեզները կիրառվում են տարածքների, շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության նվազեցման միջոցառումների պլանավորման, արտակարգ իրավիճակների կառավարման և նրանց հետևանքների վերացման համար:

Հայցվող տարածքի կառուցապատման համար պարտադիր է „Սեյսմիկ պաշտպանության մասին,, ՀՀ օրենքի և վերը նշված իրավական փաստաթղթերի պահանջների կատարումը:



Նկ.4 ՀՀ սեյսմիկ շրջանացման սխեմատիկ քարտեզը: a=0.2g, մինչև 3 բալ, a= 0.3g, 3-ից 9 բալ, a=0.4g, 9 և ավելի բալ, a=0.5g, կործանարար երկրաշարժ/

3.6. Հողերը

Կոտայքի սարավանդի բարձրադիր մասերում տարածված են շագանակագույն, ցածրադիր մասերում՝ բաց շագանակագույն և գորշ հողերը: Բալահովիտ համայնքում գերակշռում է *Շագանակագույն հողային տիպի բաց շագանակագույն, տեղ-տեղ կարբոնատային, ցեմենտացված* ենթատիպը: Բաց շագանակագույն հողերը զարգանում են շոգ և չոր կլիմայական պայմաններում, չոր տափաստանային գոտուն բնորոշ հացազգի տարախոտային *բուսական համակեցությունների* ազդեցությամբ, հիմնային հրաբխային և նստվածքային ապարների հողմնահարված նյութերի լիթոլոգիական հիմքի վրա: Բաց շագանակագույն հողերը հարուստ չեն հումուսով /2.0-3.5 %/ և աչքի են ընկնում լավ արտահայտված ալյուվիալ-կարբոնատային հորիզոնի առկայությամբ և հաճախ ունեն կարբոնատային ցեմենտացված հիմք, մեխանիկական կազմը հիմնականում կավավազային է: Այս հողերին բնորոշ է կատիոնների կլանման միջին ունակությունը, ջրային մզվածքի թույլ հիմնային ռեակցիան, կարբոնատների և քարի զգալի պարունակությունը: Հողերի գույնի մգությունը կապված է նրա մեջ հումուսի պարունակությամբ, որքան մուգ է գույնը՝ այնքան բարձր է հումուսի պարունակությունը: Բալահովիտ համայնքում գերակշռում են քարքարոտ, ողողված և սակավազոր հողերը: Հողի բերրի շերտի հզորությունը մի քանի սանտիմետրից հասնում է մինչև մի քանի տասնյակ սանտիմետրի:

“Արփիմեղ” գործարանի համար հատկացված հողատարածքը ալյուվիալ գետահովիտ է և աչքի է ընկնում բերուկային նստվածքներով, որի բերրի վերնաշերտը կազմում է 20 - 40 սմ: Ավելի խորքում պոտենցիալ բերրի հողաշերտն է, որն ունի կավավազային մեխանիկական կառուցվածք:



Նկ. 5 Հողային պրոֆիլ Բալահովիտի գործարանի համար հատկացված տարածքում

“Արփիմեդ” գործարանի շինարարության համար հատկացված հողամասի նպատակային նշանակությունը “Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության” հողեր են “արդյունաբերական” գործառնական նշանակությամբ, հողատեսքը մասամբ աղտոտված է հին շինարարության մնացորդներով, դեգրադացված չէ:

Նախատեսվում է, որ շինարարության տակ մնացող բերրի հողաշերտը կօգտահանվի, կպահեստավորվի և կօգտագործվի ՀՀ կառավարության 02 11 2017թ N 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան: Օգտահանվող *հողի բերրի շերտի* հզորությունը տարբեր է՝ 20-40 սմ: Օգտահանման ենթակա է կառույցների հիմքերի տակ մնացող հողի բերրի շերտը՝ միջինը 30 սմ խորությամբ: Օգտահանված բերրի հողը համայնքի սեփականությունն է, վաճառքի ենթակա չէ և կիրառվում է տարածքի բարեկարգման նպատակներով:

3.7. Ջրային ռեսուրսներ

Կոտայքի մարզը հարուստ է ջրային ռեսուրսներով: Մարզի տարածքով են հոսում Հրազդան, Մարմարիկ, Մեղրաձոր, Ծաղկաձոր, Դալար, Արջաձոր, ինչպես նաև Գետառ, Ակունք և Ազատ գետերը: Այստեղ են գտնվում նաև Ակնա լիճը, Սևաբերդի, Մարմարիկի ջրամբարները:

„Արփիմեդ“, գործարանի համար հատկացված տարածքը գտնվում է Ակունք գետի հին ողողահունում: Մոտակայքով է անցնում Արզնու ջրանցքը, որը սկիզբ է առնում Հրազդան գետից, ոռոգելով Բալահովիտ համայնքի որոշ հողեր և խառնվում է Գետառ գետի հետ:

Ակունք գետակը սկիզբ է առնում Հատիս լեռան արևմտյան լանջերից՝ Ակունք գյուղի մոտ, Քառասունակն աղբյուրներից: Ակունք համայնքից ցածր, այն խառնվելով ձախ վտակի հետ, հոսում է Մայակովսկի համայնքի վարչական տարածքով, անցնելով „Կոտայք“, գարեջրի գործարանի մոտով և Բալահովիտ համայնքի վարչական տարածքով, հատում է Երևան- Սևան ավտոմայրուղին և Գետամեջ գյուղի վարչական տարածքում առաջացնելով խորը կիրճ, խառնվում է Հրազդան գետի հետ: Երկարությունը 13 կմ է: Սնուցումը խառը՝ աղբյուրներից և տեղումներից, հորդացումը մայիս-հունիս ամիսներին: Ջրաբանական տվյալները բացակայում են: Վերին հոսանքներում գյուղատնտեսական սեզոնի ընթացքում գետի ջուրը համարյա ամբողջովին օգտագործվում է ոռոգման նպատակներով:

Հեռավորությունը Հրազդան գետի մոտակա հատվածի հետ կազմում է 2.1 կմ:

ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի մշտադիտարկում իրականացնում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ-ի կողմից: Սակայն Ակունք գետի վրա ՊՈԱԿ-ը չունի ջրի որակի դիտարկման կետ և հետևաբար բացակայում են Ակունք գետի ջրի որակի մասին տվյալները: Ակնհայտորեն Ակունք գետի ջրի որակը ցածր է, քանի որ այն հոսում է խիտ բնակեցված տարածաշրջանով, վերին հոսանքներում ոռոգման սեզոնի ընթացքում

անտեսվում է գետի անհրաժեշտ սանիտարական հոսքը և գետի հունը ողողվում է շրջակա բնակավայրերի կոյուղաջրերով: Բնակավայրերը, որոնց վարչական տարածքներով հոսում է գետակը, կոյուղացված չեն և չունեն ջրի մաքրման համակարգեր: Բալահովիտի վարչական սահմանում, Կոտայք գարեջրի գործարանի մերձակայքում Ակունք գետակի ջրի մի մասը, հավանաբար նաև ոռոգման նպատակով, շրջվում է դեպի հարավ՝ Առինջ գյուղի ուղղությամբ, որտեղ այն ոռոգման սեզոնում ամբողջովին ցամաքում է: Այս գետակը ներառում է շրջակայքի հեղեղային և կոյուղային հոսքերը և ակնհայտորեն խիստ աղտոտված է:

Հողային ֆոնդում „ջրային,, նպատակային նշանակությամբ նշված է 6.11 հա տարածք, որից „գետեր,, գործառնական նշանակության՝ 2.33 հա և „ջրամբարներ,, գործառնական նշանակությամբ՝ 2.79 հա: *Տեղում ուսումնասիրությունը ցույց տվեց, որ համայնքի հատակագծում նշված ջրամբարը չի գործում /աղաջրի ավազանը/ իրականում այն վեր է ածվել չկանոնակարգված աղբավայրի:*

Բալահովիտ համայնքի հյուսիսային սահմանագծում բխող աղբյուրներից ձևավորվում է երկու վտակ, որոնց ջրերով ոռոգվում է ցածրադիր այգիներն ու հողամասերը: Այս վտակները միախառնվում են ապակյա տարաների գործարանի մոտ, որտեղ փոքրիկ պատվարով առաջացրել են ավազան: Այս ավազանում հավաքվում է նշված գործարանի հոսքաջրերը, որտեղից էլ հատելով Երևան – Սևան ավտոմայրուղին, այդ աղտոտված ջրերը խառնվում են Ակունք գետակի ջրերին և թափվում Հրազդան գետ: Ակունք գետակի վրա Բալահովիտի վարչական շրջանում կառուցվում է փոքր ՀԷԿ:

“Արփիմեղ” գործարանի շինարարության համար հատկացված տարածքում չկան բնական աղբյուրների ելքեր և ստորերկրյա ջրերի մակարդակը գտնվում է Ակունք գետի հայելու մակարդակից ոչ բարձր: Ակունք գետի հայելու մակարդակը մոտավորապես 40 մ ավելի ցածր է:

3.8. Մթնոլորտային օդ

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ-ի կողմից /www.armmonitoring.am/:

ՊՈԱԿ-ը Բալահովիտ համայնքում չունի դիտակայան, չի տեղադրում պասիվ նմուշառիչներ, մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ „Հայելոմոնիթորինգ,-ի առաջարկած է համապատասխան ձեռնարկ-ուղեցույցից¹: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար

¹ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ. “ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները” ուղեցույց-ձեռնարկ: Երևան-2011

բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.2 մգ/մ³;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

3.9. Կենսաբազմազանություն

Հայաստանի աշխարհագրական դիրքը և ռելիեֆը նպաստել են հարուստ կենսաբազմազանության և բնաշխարհիկության ձևավորմանը: Հայաստանի տարածքում հայտնաբերված են մոտ 3500 տեսակի բարձրակարգ ծաղկավոր բույսեր, ավելի քան 17500 կենդանատեսակներ, որոնցից մոտ 500-ը՝ ողնաշարավորներ: Ցածրակարգ բույսերի և միկրոօրգանիզմների քանակությունն անցնում է մի քանի տասնյակ հազարից: Հայաստանի կենսաբազմազանությունը հարուստ է տնտեսապես արժեքավոր տեսակներով: Բույսերի մոտ 2000 տեսակներ օժտված են սննդարար, կերային, դեղատու, ներկատու, եթերայուղատու, մեղրատու, խեժատու, մի շարք կենդանիներ՝ մորթատու, մսատու և այլ հատկանիշներով: Հասարակության պահանջմունքների ավելացման զուգընթաց ընդլայնվում է կենսաբազմազանության բաղադրիչների ներգրավումը մարդու գործունեության տարբեր ոլորտներում: Դրա պատճառով աստիճանաբար տեղի են ունեցել տեսակների դեգրադացիա և ոչնչացում՝ հանգեցնելով կենսաբազմազանության աղքատացման: Այս երևույթն առավել ակտիվ է ընթացել վերջին հարյուրամյակում՝ կապված շրջակա միջավայրի արդյունաբերական, գյուղատնտեսական, տրանսպորտային, էներգետիկ և այլ աղտոտվածությունների աճի, ինչպես նաև անտառների, արոտավայրերի և այլ էկոհամակարգերի ակտիվ շահագործման հետ: Իրավիճակն ավելի է սրվել վերջին տարիների քաղաքական և սոցիալ-տնտեսական վերակառուցումների ընթացքում կենսաբազմազանության անկայուն օգտագործման պատճառով որոշ բնական միջավայրեր դեգրադացվել են (ներառյալ անտառները, լեռնային արոտավայրերը և գերխոնավ տարածքները), իսկ մի շարք տեսակներ հայտնվել են անհետացման եզրին: Կենսաբազմազանության պահպանությունը համընդհանուր էկոլոգիական խնդիր է: Բուսական և կենդանական աշխարհի յուրաքանչյուր տեսակի կորուստը կարող է վճռական նշանակություն ունենալ էկոհամակարգերի ամբողջության, հավասարակշռության ապահովման, մարդկանց առողջության և կայուն զարգացման համար: Կենսաբանական բազմազանությունը հասարակության կենսագործունեության, հարատևության և սոցիալ-տնտեսական զարգացման հիմքն է:

3.9.1 Բուսական աշխարհ

Կոտայքի մարզում բուսական աշխարհը ներկայացված է Գեղամա և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային չոր տափաստանային գոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են վաղամեղ /էֆեմեր/ բույսերը և ճիւղ առաջացնող հացազգիները, մասնավորապես անապատասեզրը, ցորնուկը, այծակնը, դաշտավլուկը: Այստեղ անդեզիտա-բազալտային և տուֆա-լավային մայր ապարների վրա տարածված տարավացված շագանակագույն հողերի և ռոռզովի հանդամասերի վրա կարելի է հանդիպել մոտ 150 բուսատեսակ: Դրանցից որպես դոմինանտ կամ բնորոշ տեսակներ կարելի է նշել գարնան վերջերին փարթամ բուսածածկ առաջացնող էֆեմերներից առնասպարը /Androsace/, ճոճուկը /Cerasfium/, եղջրագլխիկը /Ceratocephala sp./, սագասոխուկը /Gagea sp./, պապլորը /Muscari sp./, աստղաշուշանը /Ornithogalum sp./ և այլն: Ամռան շոգերի հետ այս բույսերը չոռոզվող հանդակներում ամբողջովին խանձվում են: Տիրապետող բույս է մնում հոտավետ օշինդրը /Artemisia sp./, որը սպիտակաթաղիք ցողուններով, չորասեր, կամֆորայի դուրեկան հոտով կիսաթուփ է: Սակայն օշինդրային բուսածածկույթը հիմնականում վերածվել են մշակովի դաշտերի և այգիների: Տարածված բուսատեսակներից է նաև կապարը /Capparis spinosa/, կոխիան /Kohia sp./, նոնեան /Nonea sp./, լերդախոտ սովորականը /Teucrium chamaedrys/, բորբոսատեսուկը /Ceratooides sp./, դաշտավլուկը /Poa sp./, որոնք երբեմն առաջացնում են ինքնուրույն բուսական համակեցություններ:

Շրջակա բնակչության համար առանձնապես հետաքրքրություն է ներկայացնում վայրի ուտելի բույսերը՝ սիբեխ /Falcaria vulgaris/, թրթնջուկ /Rumex acetosella/, կապար /Capparis spinosa/, եղինջ /Utrica dioica L./, խատուտիկ /Taraxacum/, դանդուղ /Portulaca grandiflora/ և այլն: Տարածաշրջանում կան նաև դեղաբույսեր՝ կուսածաղիկ /Vinca herbacea/, անթառամ /Helichrysum/, առյուծագի /Leonotis cardiaca/, լոշտակ /Bryonia alba/, հազարտերևուկ /Achillea/, սրոհունդ /Hypericum/, սպանդ /Peganum harmala/ և այլն: Կան նաև ներկատու, եթերայուղատու և համեմունքային բույսեր /ուրց, անանուխ և այլն/:

Բալահովիտը թեև գյուղական համայնք է, սակայն համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերի մասնաբաժինը մեծ չէ, որի պատճառով կրճատվել է վայրի բնության ներկայացուցիչների կենսագործունեության միջավայրը, կրճատվել է կենսաբազմազանությունը:

Ուսումնասիրվել է “Արփիմեղ” գործարանի կառուցման համար հատկացված հողատարածքի կենսաբազմազանությունը: Այն հավանաբար նախկինում մշակված վարելահող է եղել և այժմ ամբողջովին վնասված /դեգրացված/ լանդշաֆտ է, որտեղ չեն պահպանվել վայրի բնության ներկայացուցիչները, այդ թվում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսականության տեսակներ:

3.9.2 Կենդանական աշխարհ

Բալախովիտ համայնքի վարչական տարածաշրջանը մեծապես ուրբանիզացված է, չկան չօտագործվող հողահանդակներ, արոտավայրեր ու խոտհարքներ:

Տարածքին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներն են լեռնային չոր տափաստաններում բնակվող Հայաստանում ամենուրեք տարածված սպիտակամկնիկը /Crocidura/, աղվեսը /Vulpes/, գերմանամուկը /Cricetus auratus/, դաշտամուկը /Mucrotus arvalis Pall/, կաքավը /Perdis perdix L./ և այլն:

Բալախովիտի գործարանի համար նախատեսված տարածքը գտնվում է Բալախովիտ բնակավայրի կենտրոնական մասում, արդյունաբերական գոտում, այստեղ չկան վայրի կենդանիների բնակավայրեր, այդ թվում ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակներ:

3.9.3 Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

“Արփիմեդ” Բալախովիտի գործարանի համար հատկացված տարածքի հարևանությամբ չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ: Մոտակա արգելավայրերն են “Արգականի և Մեղրաձորի” արգելավայր /հեռավորությունը ուղիղ գծով 20,4 կմ/, Ջրվեժի անտառպուրակ /հեռավորությունը ուղիղ գծով 7,5 կմ/, “Խոսրովի անտառ” պետական արգելոցը /հեռավորությունը ուղիղ գծով 18,5 կմ/:

3.10. Ազդակիր համայնքը

„Արփիմեդ,, գործարանը կառուցվում Բալախովիտ համայնքում:

Համայնքի պատմական անվանումը - Միուր

Համայնքի հիմնադրման ժամանակաշրջանը - 1828թ

Մահմանակից բնակավայրերը՝ Պտղնի, Աբովյան, Մայակովսկի, Առինջ, Գետարգել:

Համայնքի մակերեսը - 510 հա, հեռավորությունը մայրաքաղաքից - 15կմ, բնակչության թիվը – 3537 բնակիչ, բնակչության ազգային կազմը - հայեր, եզդիներ, քրդեր, ռուսներ:

Օգտակար հանածոներ -բազալտի հանքավայր, շլաքի հանքավայր:

Կրթական հաստատություններ - Իս. Վիրաբյանի անվան միջն. դպրոց, համայնքում կա մանկապարտեզ: Մշակութային հաստատություններ – կա մշակույթի ակումբ:

Մարզական հաստատություններ – չկան: Համայնքը ունի արտադրական գոտի, որտեղ գործում են բազմաթիվ արտադրական ձեռնարկություններ - <<ՋԻԱԸՓԻ-ՄԻՍԹԵՄՍ>>

ՍՊԸ, <<Զառացյան և ընկ.>> ՍՊԸ, <<Արարատ-1>> ՍՊԸ, <<Սարանիստ>> ՍՊԸ,

<<Գոշավտոտրանս>>ՍՊԸ, <<Հիդրոշինարար-5>>ՍՊԸ, <<Աբովյանի պտուղ բանջ.>>

ՓԲԸ, <<Ռեմդիզել>> ՓԲԸ:

Համայնքի բնակչության զգալի մասը աշխատում է գյուղի, Աբովյան քաղաքի, այդ թվում նաև մայրաքաղաք Երևանի հիմնարկ-ձեռնարկություններում:

Երևան–Սևան երկաթուղին համայնքը բաժանում է երկու մասի: Երկու տեղում համայնքի փողոցները անցնում են երկաթուղու վրայի կամուրջներով, իսկ մի տեղում

երկաթուղին հատվում է Երևան-Աբովյան ավտոմայրուղու հետ կարգավորվող խաչմերուկով: Համայնքում աշխատող արտադրական ձեռնարկությունների հիմնական մասը տեղադրված է ավտոմայրուղու արևմտյան կողմը:

Համայնքի հյուսիսային հատվածում բլրի վրա տեղադրված է աղաջրի բազմատոննաժ ավազանը, որը գազի ստորգետնյա պահեստների աղաջրի բուֆերային պահեստարանն է /այժմ չի աշխատում/: Համայնքի հյուսիսում 4.4 հա է զբաղեցնում ապակյա տարաների ժամանակակից գործարանը և այլ ձեռնարկություններ: Համայնքի արևելյան մասում Գյուղատնտեսական ակադեմիայի անասնապահական համալիրի մասնաշենքերն են /12.37 հա/: Կան բազմաթիվ փոքրիկ արտադրամասեր համայնքի արևելքում: Հատուկ նշանակության 56.56 հա տարածքները երեք հողակտորի տեսքով են՝ համայնքի բնակավայրին կից 35.6 հա և հս-ամ հատվածում՝ Երևան-Սևան ավտոմայրուղուն կից: Երևան և Աբովյան քաղաքներին մոտիկությունը կանխորոշում է Բալահովիտի բնակչության աշխատանքային զբաղվածությունը և եկամուտների աղբյուրները: Համայնքի բնակիչներից շատերը աշխատում են Երևանում և Աբովյանում, մի մասն էլ համայնքում գտնվող ձեռնարկություններում:

3.11. Պատմության և մշակույթի հուշարձանները

Բալահովիտ գյուղի տարածքը բնակեցված է եղել վաղնջական ժամանակներից: Այդ մասին են վկայում գյուղի արևելյան բլրի վրա պահպանված Ք.ա. 3-2-րդ հազարամյակով թվագրվող բնակատեղին, Ք. ա. 2-րդ հազարամյակին թվագրվող բնակատեղին, հնագույն ամրոցը և դամբրանադշտերը /Ք.ա. 2-1 հազարամյակ/, 5-րդ դարից սբ. Կարապետ մատուռը, սբ. Հովհաննես եկեղեցին և կից գերեզմանոցը /13-14 դ./ և 9-13 դարերի բազմաթիվ խաչքարերը: Պատմական հուշարձաններ են կերտվել նաև ավելի մոտիկ ժամանակներում՝ սբ. Աստվածածին եկեղեցին՝ 19-րդ դարում, հավանաբար գյուղի վերջին վերաբնակեցման ժամանակակիցը: Կան նաև նորագույն հուշարձաններ. Կույս Վառվառա մատուռը և այլ հուշարձաններ: Ստորև ներկայացվում է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված Կոտայքի մարզի Բալահովիտ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը / ՀՀ Կառավարության 24 12 2003 թ. Թիվ 1793-Ն որոշումը/:

Աղյուսակ 3.5 Բալահովիտ գյուղի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը

Հուշարձան	Դարաշրջան	Տեղադիրքը	Ծանոթություն
ԱՄՐՈՑ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղի աե մասում	
Բնակատեղի	Ք.ա. 2 հազ.		
Դամբարաններ	Ք.ա. 2-1 հազ.		
ԲԱՅՕԹՅԱ ԿԱՅԱՆ	քարի դար	ռադիոկայանի մոտ՝ բլրալանջին	
ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	17-20 դդ.	ամրոցի հվ, թեք սարալանջին	

Մատուռ «Կույս Վարվառա»			
Խաչքար	13 դ.		
Խաչքար	13-14 դդ.		
ԳԵՐԵԶՄԱՆՈՅ	19-20 դդ.	գյուղի հս-աե եզրին, երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարանի մոտ	
ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԵԼԻՋԱ»	12-20 դդ.	գյուղից աե, հարթ տարածքի վրա	լքվել է 20-րդ դ. 20-ական թթ.
Եկեղեցի	9-14 դդ.		պահպանվել են հիմքերը
Խաչագարդ քար	9-10 դդ.	եկեղեցու ներսում	
Խաչագարդ քար	9-10 դդ.	եկեղեցում, մուտքի մոտ	
Գերեզմանոց	9-14 դդ.	եկեղեցուց աե, ձորակի աջ ափին	
Խաչքար	9-10 դդ.		ընկած է գետնին
Խաչքար	10-12 դդ.		կանգնեցված է գետնի վրա
Խաչքար	10-12 դդ.	գերեզմանոցի աե եզրին	ընկած է գետնին
Խաչքար	10-12 դդ.		ընկած է գետնին
Խաչքար	10-12 դդ.		ընկած է գետնին
Խաչքար	10-12 դդ.		ընկած է գետնին
Խաչքար	10-12 դդ.		ընկած է գետնին
Խաչքար	10-12 դդ.		ընկած է գետնին
Խաչքար	10-12 դդ.		ընկած է գետնին
Խաչքար	10-12 դդ.		ընկած է գետնին
Խաչքար Միրզայի	1256 թ.	եկեղեցու ա պատի տակ	վերնամասը կոտրված, պատվանդանի վրա
Խաչքար	13 դ.		1256 թ. խաչքարի մոտ, պատվանդանի վրա, ստորին հատվածը
Խաչքար	13 դ.		պատվանդանի վրա
Եկեղեցի Մբ. Աստվածածին	19 դ.		
ԵԿԵՂԵՑԻ ՄԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ	19 դ.	գյուղի մեջ	
ԵԿԵՂԵՑԻ ՄԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ	13-14 դդ	Մբ. Աստվածածին եկեղեցուց աե	պահպանվել են հիմքերը
Գերեզմանոց	13-19 դդ.	եկեղեցու շրջակայքում	
ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՋՈՆՎԱԾՆԵՐԻՆ		գյուղի մեջ	քանդ. Խ. Միրիջանյան
ՀՈՒՇԱՐՁԱՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՋՈՆԵՐԻՆ		գյուղի մեջ	
ՄԱՏՈՒՌ ՄԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ	19 դ.	Երևան-Աբովյան ճանապարհի աջ կողմում	
ՄԱՏՈՒՌ ՄԲ. ԿԱՐԱՊԵՏԻ	5 դ.	Մբ. Աստվածածին եկեղեցուց 200 մ հվ-աե, ճան-ի եզրին	
ՔԱՂԱՔԱՏԵՂԻ	Ք.ա. 3-2 հազ.	գյուղի աե մասում	
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.		

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4.1. Գոյություն ունեցող վիճակը

Ընկերության դեղագործական գործարանի կառուցման համար հատկացված տարածքը գտնվում է Բալախովիտ գյուղական համայնքի „արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության,, հողատարածքների վրա, ՀՀ, Կոտայքի մարզ, Բալախովիտ, 8-րդ փողոցի 1-ին նրբանցք 4 հասցեում: Տարածքը մոտավորապես սեղանակերպ հատակագծով, համարյա հորիզոնական հողամաս է, 2.175 հա մակերեսով:

Հյուսիս-արևելքից բետոնե ցանկապատով առանձնացված է Երևան-Սևան երկաթուղուց՝ երկաթուղու պաստառի սահմանագծով, հարավ – արևմուտից՝ այգի է, հյուսիս – արևմուտքում սահմանագիծը մասամբ անցնում է գրունտային ճամպարհի պաստառի երկարությամբ, մասամբ՝ չյուրացված տարածքի հարևանությամբ: Գործարանի կառուցման համար նախատեսված հողամասի հարևանությամբ գտնվում են քարամշակման ձեռնարկություն, գրասենյակներ, պահեստներ և բազաներ:

Տարածքի հյուսիսային պարսպի երկայնքով աճում են սալորենիներ /*Prunus domestica*/, ծիրանենիներ /*Prunus armeniaca*/ և խնձորենիներ /*Malus domestica*/, ընդամենը 15 ծառ:

Շինարարության տարածքի մուտքը հյուսիս-արևմտյան անկյունից է:

Ընկերության նախատեսվող գործարանի կառուցման համար հատկացված հողատարածքով չեն անցնում կոմունիկացիաներ /գազի, ջրի, հոսանքի/:

Նշված կոմունիկացիաները անցնում են Երևան – Աբովյան մայրուղու երկայնքով, նախատեսված տարածքից 50 – 200 մ հեռավորության վրա:

Ազդեցությունը գնահատվել է շինարարության և շահագործման փուլերի համար:

4.2. Շինարարության փուլ

Ընկերությունը նախատեսում է 24 ամսվա ընթացքում Կոտայքի մարզի Բալախովիտ համայնքի 8-րդ փ. 1-նրբանցք, թիվ 4 հասցեում կառուցել “Արփիմեդ” դեղագործական գործարան, կազմված երեք հիմնական՝ «Ոչ ստերիլ հեղուկ դեղամիջոցների արտադրության», «Հակաուռուցքային դեղերի արտադրության», «Գրասենյակային և լաբորատորիայի » մասնաշենքերից և օժանդակ կառույցներից: Այդ նպատակով ընկերությունը «Թերմոշինթել» ՍՊԸ /լիցենզիա 12480/ իրականացվել են համապատասխան շինարարական նախագծեր և որոշակի ընթացակարգերից հետո ստացվել են Բալախովիտի համայնքապետի կողմից հաստատված շինթույլտվություններ /N 01-03, 22 01 2020 թ./:

Ըստ շին. թույլտվության կառուցապատման մակերեսը կարող է կազմել ընդհանուր տարածքի մինչև 45%, կանաչապատումը՝ ոչ պակաս քան 35%:

Նախատեսվող շինարարական աշխատանքների տարածքը նախապատրաստելու նպատակով կատարվելու են առկա կառույցների ապամոնտաժման և հողային աշխատանքներ:

4.2.1 Նախապատրաստական աշխատանքներ

Շինարարության թույլտվություն ստանալու և շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- Համապատասխան կազմակերպություններից պարզել տարածքի անմիջական մերձակայքում կոմունիկացիաների հստակ տեղադիրքը,
- Նախապատրաստել շինհրապարակի տարածքը հիմնական շինարարության համար, ապահովել անվտանգությունը և անխափան ելումուտը դեպի տարածք,
- Մաքրել տարածքը աղբից,
- Տեղադրվում են ժամանակավոր տնակներ, աշխատակիցների կենցաղային կարիքները և անվտանգությունը ապահովվելու համար,
- Ուսումնասիրել շինարարության հրապարակի և ենթակառուցվածքների հողաձածկը, չափել աշխատանքների տեղամասերի *հողի բերրի շերտի* հզորությունը և հաշվարկել ստույգ ծավալները,
- Նախապատրաստել հանված բերրի հողի պահեստ,
- Շինհրապարակը ապահովվում է էլեկտրամատակարարմամբ (ՀԷՑ «Գեղամա» մասնաձյուղ) ջրամատակարարմամբ («Վեոլիա ջուր» ՓԲԸ), գազամատակարարում («Աբովյանի» ԳԳՄ), անվտանգության և երթևեկության կարգի նախագծուշացնող ցուցանակներով, փորվում են անհրաժեշտ փոսերը, տեղադրվում տարողությունները, կոմունիկացիաները, տեղադրվում են կառավարման համակարգերը և սարքավորումները,
- Առաջնահերթ իրականացնել հոսանքի, ջրամատակարարման ցանցին միացման աշխատանքներ և կեղտաջրերի հավաքման հորի տեղադրում:

Շինարարական աշխատանքների ժամանակամիջոցը կկազմի 2 տարի:

Նախատեսվող շինարարության գլխավոր հատակագիծը հանգույցների և շինությունների տեղադիրքով բերված է հավելվածների մասում:

4.2.2 Քանդման աշխատանքներ

Նախատեսվում է ապամոնտաժել գործարանի կառուցման համար նախատեսված տարածքում գտնվող բետոնե կոնստրուկցիաներով հավաքված շենքը՝ 48x10 մ չափերով: Քանդված շինարարության անվնաս մնացած բետոնե դետալները և երկաթյա կոնստրուկցիաները մասամբ օգտագործվելու են այլ շինարարություններում, մասամբ վաճառվելու են: Առաջացած շինարարական աղբը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր: Ըստ նախնական գնահատման քանդման արդյունքում կառաջանան 496 մ³ շինարարական կոնստրուկցիաների մնացորդներ և շինաղբ, որից մոտավորապես 200 մ³՝ որպես պիտանի շինանյութ կօգտագործվի, շինարարական աշխատանքների ժամանակ, իսկ մնացած 296 մ³՝ այլ շինաղբի հետ կտեղափոխվի Բալահովիտի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Թափոնները ըստ ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N 342-Ն հրամանի համապատասխանում են՝ «Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ» տեսակին, դասիչ՝ 91200601 01 00 4:

Շինաղբի համար հատուկ պահեստ չի նախատեսվում, այն կկուտակվի աշխատանքների իրականացման տեղամասերում և առաջին իսկ հնարավորության դեպքում կտեղափոխվի աղբավայր:

4.2.3. Շինարարական աշխատանքներ

Կառուցապատման տոկոսն ընդունված է մինչև 45, կանաչապատմանը՝ ոչ պակաս քան 35 տոկոս:

Արտադրական և օժանդակ մասնաշենքերի դասավորությունը պայմանավորված է հողամասի դիրքով, լանդշաֆտի առանձնահատկություններով, հեռավորությունների նորմատիվ պահանջներով, բնական լուսավորության հաշվարկներով:

Մեքենաների մուտքը ավտոկայանատեղի նախատեսված է հողամասի հյուսիսային մասից՝ գոյություն ունեցող գրունտային ճանապարհով:

Նախատեսվում է կառուցել հետևյալ շինությունները.

- «Ոչ ստերիլ հեղուկ դեղամիջոցների արտադրության մասնաշենք»՝ մինչև 21.5 մ բարձրությամբ շինություն:
- «Հակաուռուցքային դեղերի մասնաշենք»՝ երկհարկանի շինություն, բարձրությունը՝ մինչև 16մ:
- «Գրասենյակային և լաբորատորիայի մասնաշենք»՝ մինչև 19.3 մ բարձրությամբ շինություն:
- «Հակաբիոտիկների արտադրության մասնաշենք»
- «Ընդհանուր օգտագործման պահեստ»
- «Կաթսայատուն և ընդհանուր օգտագործման մասնաշենք»

Բացի թվարկվածներից նախատեսվում է կառուցել պահակատուն, ենթակայան, վերանորոգել, իսկ որոշ հատվածներում նառուցել նոր պարիսպ:

Նախատեսվում է շինությունների տանիքներին տեղադրել արևային համակարգեր, որոնք բաղկացած կլինեն ինչպես էլեկտրաէներգիայի արտադրության ֆոտովոլտաիկ, այնպես ջրատաքացուցիչ համակարգերով:

Շինությունների պատերը նախատեսվում են իրականացվել պեմզաբլոկներով, արտաքինից երեսապատում: Ծածկերը Ե/Բ միաձույլ սալեր են, միջնորմները՝ պեմզաբլոկ, գիպսաստվարաթուղթ: Տանիքը՝ հարթ և կազմակերպված ջրահեռացումով:

Շենքերի սեյսմազինվածության մակարդակը նախատեսված սեյսմիկ - III գոտու համար (9 Բալ և ավելի):

Կառուցապատման վերաբերյալ ընդհանուր ցուցանիշները բերված են ստորև:

- Հատկացվող հողամասի ընդհանուր մակերես - 2.175 հա,

Շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ
- Հողային աշխատանքներ
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
- Պատեր և միջնապատեր
- Տանիքային աշխատանքներ
- Ներքին ինժեներական ցանցեր
- Հարդարման աշխատանքներ
- Երեսպատման աշխատանքներ
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա սալվածքներ և ասֆալտապատ հարթակներ:

Շինարարության տևողությունը 24 ամիս՝ շինարարության թույլտվության տրամադրման օրվանից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Շինարարության ընթացքում բանվորները կսնվեն հատուկ ճաշարան-տնակում: Շինարարությունը իրականացնող աշխատողների առավելագույն թիվը կկազմի 65 մարդ:

Շինարարությունը իրականացվելու է հետևյալ մեքենա-մեխանիզմներով.

1. Էքսկավատորներ
2. Ինքնաթափ ավտոմեքենաներ
3. Ավտո և աշտարակային կռունկներ և այլն:

4.2.4. Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրապահանջը

Ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների և տեխնիկական պայմանների համաձայն:

Արտադրական համալիրի կառուցման աշխատանքային նախագծի <<Ջրամատակարարում և կոյուղի>> բաժինն իր մեջ կներառի՝

- Արտաքին և ներքին ջրամատակարարում
- Արտաքին և ներքին կոյուղի
- Անձրևաջրերի հեռացման հեղեղատար կոյուղի:

Ջրամիացումն իրականացվելու է <<Վեռլիա Ջուր>> ՓԲԸ կողմից տրվող ջրամիացման նախագծման տեխնիկական պայմաններին համապատասխան՝ ջրամիացման, հի հիդրանտի տեղադրման: Ջրատարում վթարների և

վերանորոգումների ժամանակ ջրամատակարարման անընդհատությունը ապահովելու, ինչպես նաև ներքին հակահրդեհային ջրաքանակ ապահովելու համար նախատեսվում է պահուստային բաքի տեղադրում, որը միաժամանակ կարգավորող դեր է կատարելու:

Ջրամիացումն իրականացվելու է նախագծված տարածքի հարևանությամբ անցնող Բալահովիտի համայնքային ջրագծից:

Կոյուղաջրերը կհավաքվեն մեկ բակային ցանցում և նախատեսվում է դրանք արտաքին խողովակով միացնել «Կոտայք» գարեջրի գործարանի կոյուղատարին, որի համար կա նախնական պայմանավորվածություն Բալահովիտի համայնքապետարանի և գարեջրի գործարանի ղեկավարության հետ:

Հաշվի առնելով շինարարության տևողությունը, համապատասխան պայմանագրեր կկնքվեն շինարարական աշխատանքների վերջին փուլում:

Ջրաչափական հանգույցի և հի հիդրանտի տեղադրման կետերում կառուցվելու են դիտահորեր:

Անձրևաջրերի հեռացում /հեղեղատար կոյուղի/

Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը նախատեսված է կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Տարածքի ցածրադիր տեղերում տեղադրվելու են անձրևընդունիչ հորեր, որտեղից անձրևաջրերը կհեռացվեն տարածքից և համաձայն տեխնիկական պայմանի կմիացվեն գործող հեղեղատար ցանցին:

4.2.5. Ջեռուցում և տաք ջրամատակարարում

Ջեռուցումը նախատեսվում է կենտրոնական: Նախատեսվում է կառուցել կաթսայատուն, որտեղ տեղադրվելու են գազային ջրաջեռուցիչներ:

Տաք ջրամատակարարումն իրականացվելու է արևային ջրատաքացուցիչների միջոցով:

4.2.6. Կանաչապատում և բարեկարգում

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Տարածքի կառուցապատման մակերեսը պետք է լինի մինչև կանաչապատման մակերեսը կկազմի ընդհանուր հողամասի առնվազն 35%-ը /ավելի քան 7612.5 մ²/, մնացածը կկազմի կառուցապատումը, ներառյալ՝ շինությունները, ներքին ճանապարհները, սալվածքները և բաց պահեստները:

Առաջին հերթին աշխատանքները կազմակերպվելու են այնպես, որ չվնասվեն գոյություն ունեցող ծառերը: Այդ շարքի նոր ծառերի դասավորությունը լինելու է ցանկապատի եզրով:

Կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ: Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար

օգտագործվելու է կաղնի, հացենի, թղկի և այլ ծառատեսակներ: Այս տեսակները հարմար են տեղի լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին:

Կանաչապատման համար նախատեսվում է օգտագործել հողային աշխատանքների ժամանակ պահեստավորված բուսահողը: Կանաչապատումը կիրականացվի Բալահովիտի համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ կանաչապատման և բարեկարգման պլաններին համապատասխան:

Ռոտզումն իրականացվելու է գործարանի մաքրման կայանի մաքրված ջրերի միջոցով:

4.3. Շահագործման փուլ

Ընկերությունը արտադրական պրոցեսում չի օգտագործում բարդ տեխնոլոգիական գործընթացներ, քիմիական սինթեզ: Տեխնոլոգիական գործընթացները ներառում են լուծույթների պատրաստում, շշալցում, հաբերի պատրաստում հումքից, փաթեթավորում, պահեստավորումը և այլն: Փաթեթավորման համար անհրաժեշտ նյութերը /ապակյա տարաներ, թուղթ, ստվարաթուղթ, ալյումինի ֆոլգա, պլաստիկ թաղանթներ և այլն/ ստացվում են պատրաստի: Մեծածավալ տարողությունները, շշերը, կոնտեյներները, նրանց փաթեթավորման նյութերը և այլն վերադարձվում են մատակարարներին կամ հանձնվում են ընդունող մասնագիտացված կազմակերպություններին որպես երկրորդական հումք: Լուծույթների պատրաստման տեխնոլոգիայում գոլորշիների արտանետումը աննշան է և հասցված է նվազագույնի:

Նախատեսվող տեխնոլոգիաները ապահովված են համապատասխան լիցենզիաներով, սարքավորումները նախատեսվում են հայտնի ֆիրմաների արտադրության, հիմնական հումքը նույնպես կներկրվի:

Արտադրությունը կիրականացվի դասական եղանակով, որը ներառում է հետևյալ գործընթացները.

- Հումքի կշռաչափում
- Կարծր դեղանյութերի նախապատրաստում
- Հեղուկ բաղադրանյութերի նախապատրաստում
- Մաքուր (դեփոնիզացված կամ թորած) ջրի ստացում
- Բաղադրանյութերի խառնում
- Կարծր դեղանյութերի լուծում (դիսպերսացում)
- Խառնում
- Հումոգենիզացում (հումոգենիզատոր)
- Ֆիլտրում
- Առաջնային փաթեթավորում
- Շշալցում
- Երկրորդային փաթեթավորում

Նախատեսվում է արտադրել դեղամիջոցներ հաբերի, փոշու /փաթեթ/ և հեղուկ վիճակում /սրվակներ, դեղապատիճներ/: Ստորև բերված են նախատեսվող դեղամիջոցների ցանկը և տարեկան քանակները:

Աղյուսակ 4.1. Նախատեսվող դեղամիջոցները

<i>Դեղամիջոցի անվանումը</i>	<i>Տարեկան քանակը</i>
Ցեֆտրիաքսոն	100.000 ֆլակոն
Ցեֆեպիմ	200.000 ֆլակոն
Ցեֆալիբոմ	500.000 ֆլակոն
Ցեֆուրոքսիմ (Յինաբեֆ)	200.000 փաթեթ
Ցեֆուրոքսիմ (Յիննատ)	300.000 հաբ
Ցեֆալեքսին	200.000 ֆլակոն 300.000 պատիճ
Ագոտրիմիցին	100.000 հաբ 100.000 պատիճ 100.000 փաթեթ
Օրնիդազոլ	5.000.000 հաբ
Ացեկլոֆինակ	500.000 պատիճ
Էտորիկոկսիբ (Արոքսիա)	2.000.000 հաբ
Բետազիստին (Բեգասերկ)	100.000 հաբ
Օստալոն	100.000 հաբ
Իբանդրոնային թթու (Բոնվիվա)	100.000 հաբ
Դոնորմիլ (Դոնորմիլ)	100.000 հաբ
Կարբերզոլին (Դոստինեքս)	100.000 հաբ
Իզոսոլոն ղինիտրատ (Իզոկետ րետարդ)	1.000.000 հաբ
Էրինիտ	5.000.000 հաբ
Իվաբրադին (Կորակսան)	1.000.000 հաբ
Լեվոսիմետան (Սիմդակս) սրվակ 2,5մգ/մլ 5մլ №1	10.000
Բուպրոպրիոն սպինակ Heavy, սրվակ 0,5% 5մգ/մլ 4մլ №5	10.000
Քսիլոկաին	3.000.000 հաբ
Պրեստանս	1.000.000 հաբ
Լամիկտալ	10.000 հաբ 3.000.000 ֆլակոն
Տրանեկսամ	10.000 հաբ 10.000 սրվակ
Դիազեպամ (Վալիում)	2.000.000 սրվակ
Օրլիստատ (Կսենիկալ)	200.000 պատիճ
Կլոտրիմազոլ (Կանեստեն)	10.000 սրվակ
Դյուֆաստոն	200.000 հաբ
Արկոկսիա	2.000.000տաճ.
Բետաստիգին (Բեգասերկ)	100.000տաճ.
Օստալոն	100.000տաճ.
Բոնվիվա	100.000տաճ.
Դոնորմիլ (Դոնորմիլ)	100.000տաճ.

Հիմնական արտադրատեսակների բնութագրերը և նշանակությունները բերված են հավելվածների մասում:

5. «Զրոյական» և այլընտրանքային տարբերակներ

Զրոյական տարբերակ՝ նշանակում է, որ նախատեսված գործունեությունը չի իրականացվում: Այդ դեպքում Բալահովիտ համայնքի այն հողամասը, որը նախատեսված է „Արփիմեդ“, դեղագործական գործարանի շինարարության համար, մնում է անփոփոխ և/կամ այդ տարածքում այլ արդյունաբերական օբյեկտ է կառուցվում /հողամասի նպատակային նշանակությունը՝ Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական/: Այս դեպքում “Արփիմեդ” դեղագործական գործարանի համար հատկացված տարածքը մնում է անօգտագործելի կամ իրականացվում որևէ այլ արտադրական գործունեություն:

Այլընտրանքային տարբերակներից կարելի է քննարկել “Արփիմեդ” դեղագործական գործարանի այլ վայրում կառուցելը:

Ընտրված վայրի առավելությունն է. տարածքը պատկանում է կառուցապատողին, առկա են ենթակառուցվածքները /ճանապարհներ, էլեկտրամատակարարում, երկաթուղի, ջրամատակարարում /կոյուղի չկա/, մոտիկ աշխատուժ, հարթ ռելիեֆ/ և ենթակառուցվածքների կառուցման համար լրացուցիչ ծախսեր չեն կատարվում, հողային աշխատանքները նվազագույն են, շրջակա միջավայրի վրա մեծ ճնշում չկա:

Ընտրված վայրի թերությունն այն է, որ դեղագործական գործարանը գտնվում է բնակավայրի սահմանագծում և կառաջացնի որոշակի լրացուցիչ ծանրաբեռնվածություն բնակավայրի ենթակառուցվածքների վրա: Չկա գործարանի հետագա ընդարձակման /մակերեսի առումով/ հնարավորություն: Բոլոր դեպքերում “Արփիմեդ” դեղագործական գործարանի շինարարության համար նախատեսվող հողատեսքը արդեն ուրբանիզացված է, գործնականում այնտեղ չկա վայրի լանդշաֆտ և գործարանի կառուցումը և բնապահպանական օրենսդրության պահանջներով շահագործումը էապես չի փոխի ստեղծված բնապահպանական իրավիճակը:

Հաջորդ այլընտրանքը կարող է դիտարկվել՝ դեղորայքի արտադրություն քիմիական սինթեզի միջոցով, սակայն այս տարբերակը բացառվել է, քանի որ պահանջում է մեծածավալ ներդրում, բազմապրոֆիլ մասնագետների մեծ պահանջարկ ինչպես նաև բնապահպանական տեսակետից տարբերակը անհամեմատ ավելի ռիսկային է:

Այլընտրանք կարող է համարվել նաև այլ նպատակային նշանակության օբյեկտի կառուցումը քննարկվող հողամասի վրա /օրինակ՝ բնակչության սպասարկման կենտրոն, զբոսայգի և այլն/, սակայն այս հարցը չի քննարկվում, քանի որ “Արփիմեդ” ընկերության աշխատանքային մասնագիտացումը հենց դեղագործությունն է և ընկերությունը իր ուժերը և փորձն այս բնագավառում է առավել արդյունավետ կիրառում:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Բալահովիտի ներկայացվող դեղագործական գործարանի ազդեցությունը կարելի է բաժանել երեք պայմանական մասի.

- ազդեցությունը շինարարական աշխատանքների ընթացքում,
- ազդեցությունը դեղագործական գործարանի շահագործման ընթացքում,
- ազդեցությունը գործարանի փակման ժամանակ:

6.1. Շինարարական աշխատանքներ

Շինարարության փուլում ազդեցությունը պայմանավորված է փոշու արտանետումներով, աղմուկի մակարդակի բարձրացմամբ, շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործմամբ:

6.1.1. Օդի աղտոտում

Շինարարության ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում են շենքերի կառուցման հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզելառեզիդի այրման արդյունքում:

Հողային աշխատանքներ

Հիմքերի փորման, հողի բեռնման և տեղափոխման ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել նույն՝ ստորև բերված բանաձևով:

$$Q = K1 \times K2 \times K3 \times K4 \times K5 \times K7 \times B \times G \times 10^6 / 3600 \quad (q/վ), \text{ որտեղ՝}$$

K1 -ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K2 -ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աերոզոլային մասնիկների, 0.02

K3 -ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 1.0

K4 -ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K5 -ը գործակից է, որը հաշվի է առնում գրունտի խոնավությունը, 0.6 /հաշվի առնելով ջրցանը/

K6 -ը գործակից է, որը հաշվի է առնում գրունտի չափերը, 0.4

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G -ն՝ հողային զանգվածն է 1 ժամում, տ/ժ:

Փորվող հանվող հողի/գրունտի և քանդվող կառույցների ընդհանուր զանգվածը կազմում է.

- փորվող հանվող զանգված՝ 7820 մ³, որից 2936 մ³ բերրի հող,

- գոյություն ունեցող կառույցի քանդման արդյունքում առաջացող շինարարական մասեր և շինադր՝ 496 մ³:

Շինարարության ընդհանուր տևողությունը կկազմի 24 ամիս, հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է 8 ամիս կամ

$$8 \text{ ամիս} \times 22 \text{ օր} \times 8 \text{ ժամ} = 1408 \text{ ժամ/շինարարություն:}$$

Ընդամենը.

$$G = 7820 + 496 = 8322 \text{ մ}^3 \text{ ամբողջ ընթացքում, մեկ ժամում՝}$$

$$8322 \text{ մ}^3 : 1408 = 5.9 \text{ մ}^3/\text{ժամ կամ, հաշվի առնելով տեսակարար կշիռը՝}$$

$$5.9 \text{ մ}^3/\text{ժամ} \times 1.6 \text{ տ/մ}^3 = 9.44 \text{ տ/ժամ:}$$

$$Q = 0.05 \times 0.02 \times 1.0 \times 1.0 \times 0.6 \times 0.4 \times 0.6 \times 9.44 \times 10^6 / 3600 = 0.38 \text{ գ/վրկ}$$

Գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմեն՝ $0.38 \text{ գ/վ} \times 1408 \text{ ժ} / 2 \times 3600 \text{ վ} / 10^6 = 1.9 \text{ տ/շին. ժամանակահատված:}$

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականցվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, գրունտի խոնավացում, տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում:

6.1.2. Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին:

Աշխատանքների ժամանակ թրթռումների ազդեցությունը կլինի չնչին: Աղմուկի ազդեցությունը պայմանավորված կլինի շինտեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործմամբ:

Օգտագործվող շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցները ընտրվելու են այն նախապայմանով, որ դրանց տեխնիկական ցուցանիշներում աղմուկի մակարդակը չզերազանցի 80 դԲ-ն: Այս ցուցանիշը թույլ կտա ապահովել աշխատանքային տեղամասերի սանիտարական նորմերը, իսկ հաշվի առնելով հեռավորությունը բնակելի թաղամասերից՝ 0.5 կմ և ավելի, ազդեցությունը բնակավայրերում գործնականում չի զգացվի:

6.1.3. Ջրօգտագործում

Շինարարության ընթացքում ջուրն օգտագործվելու է հրապարակների ջրցանի, փորվող հանվող հողի/գրունտի խոնավացման, ինչպես նաև անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար: Ջուրը ստացվելու է համայնքային ջրատարից, որի միացումը կատարվելու է առաջնահերթ կարգով:

ա. Ջրցան

Հողային աշխատանքները նախատեսված են տարվա տաք եղանակին, համապատասխանաբար, անհրաժեշտ կլիմի իրականացնել աշխատանքային հրապարակների ջրցան: Շինարարական հրապարակի մակերեսը նախատեսված է 1200 մ²:

Ջրցանի չափաքանակը կազմում է 1.5լ/մ²:

Տաք եղանակի պայմաններում իրականացվում է ջրցան օրական երկու անգամ:

Օրական ջրցանի ջրապահանջը կկազմի՝

$$1200 \text{ մ}^2 \times 2 \times 0.0015 \text{ մ}^3/\text{մ}^2 = 3.6 \text{ մ}^3/\text{օր}:$$

Հողային աշխատանքների ամբողջ ընթացքում ջրապահանջը կկազմի՝

$$8 \text{ ամիս} \times 22 \text{ օր/ամիս} \times 3.6 \text{ մ}^3/\text{օր} = 633.6 \text{ մ}^3:$$

Ջրցանը իրականացվում է չոր եղանակին: Այստեղ կատարվել է ջրապահանջի առավելագույն ծավալների հաշվարկ:

բ. Գրունտի խոնավացում

Փորման աշխատանքների արդյունքում հանվում է ընդհանուր 8322 մ³ հող, գրունտ և քանդման մնացորդ: Այդ ընթացքում փոշու արտանետումները կրճատելու նպատակով իրականացվում է հողի և գրունտի խոնավացում:

Խոնավացման համար անհրաժեշտ ջրաքանակը կկազմի.

$$8322 \text{ մ}^3 \times 8 \text{ լ/մ}^3 = 66576 \text{ լ կամ } 66.6 \text{ մ}^3:$$

Միջին օրական՝ $66.6 : 22 \text{ օր/ամիս} : 8 \text{ ամիս} = 0.38 \text{ մ}^3/\text{օր}:$

Ընդամենը շինարարական աշխատանքների ջրապահանջը կկազմի՝

$$1056.0 + 633.6 + 582.4 = 2272.0 \text{ մ}^3:$$

Միջին օրական՝ 12.9 մ³:

գ. Խմելու-կենցաղային ջուր

ա. Խմելու ջրապահանջ

Ջրի հաշվարկային ծախսերը որոշվում են համաձայն ՇՆ 2.04.01-25 չափաքանակների:

Օրական, մեկ բանվորին – 25 լիտր

Օրական, մեկ վարչական աշխատողին – 16լիտր

Հաշվարկների համար աշխատողների առավելագույն թիվը նախատեսված է 65 հոգի, այդ թվում՝ 15 ինժեներատեխնիկական աշխատող (ԻՏԱ) և 50 բանվոր և վարորդ:

Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը կազմում է՝

$$W_{\text{խ.տ.}} = (n_1 \times N_1 + n_2 \times N_2) \times T, \text{ որտեղ՝}$$

n_1 – ԻՏԱ և վարչական աշխատողների թվաքանակն է՝	15 մարդ
N_1 – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝	0.016 մ ³ օր/մարդ
n_2 –բանվորների թվաքանակն է՝	50 մարդ
N_2 –բանվորների ջրածախսի նորմատիվն է՝	0.025 մ ³ օր/մարդ
T –աշխատանքային տարեկան օրերի թիվն է՝	520 օր /2 տարի/

$W_{\text{բ.տ.}} = (15 \times 0.016 + 50 \times 0.025) \times 520 = 774.8$ մ³/շինժամանակամիջոց, միջին օրական 1.49 մ³:

Շինարարության փուլի կեղտաջրերի հավաքման համար նախատեսվում է առաջնահերթ կարգով տեղադրել անթափանց պատերով ստորգետնյա տարողություն, որի ծավալը՝ 20 մ³, թույլ կտա ապահովել առնվազն 10 օրյա աշխատանք: Հորի դատարկումը կիրականացվի ամսեկան երեք անգամ, հատուկ մեքենաներով, որոնք կտեղափոխեն կոյուղաջրերը մոտայկա կոյուղու ցանց:

6.1.4. Ջրահեռացում

Տարածքների ջրցանի և հողերի խոնավացման ջրօգտագործման արդյունքում արտահոսք չի առաջանում:

Խմելու և կենցաղային կեղտաջրեր

$W_{\text{կենց.կոյուղի}} = W_{\text{կենցաղ.}} \times (1 - \Psi)$, որտեղ՝

Ψ ՝ կորուստները, ընդհանրացված 5 տոկոս /0.05/,

$W_{\text{կենց.կոյուղի}} = 774.8$ մ³ \times (1 – 0.05) = 736.1 մ³/շինժամ, միջին օրական՝ 1.416 մ³:

6.1.5. Ազդեցությունը հողածածկի վրա

Աշխատանքների արդյունքում կվնասվի տարածքի կառուցապատվող մասը՝ մոտավորապես 9800 մ²: Այստեղ առկա բերրի հողածածկը՝ 2936 մ³ կհանվի, կպահեստավորվի հատուկ պայմաններում և աշխատանքների ավարտից հետո կօգտագործվի տարածքի բարեկարգման և կանաչապատման նպատակով:

Շինարարական աշխատանքների արդյունքում կառաջանա շինարարական աղբ՝ 80 - 82մ³ ծավալով, որը համաձայն ՀՀ բնապահպանության /ներկայում՝ շրջակա միջավայրի/ նախարարի 25.12.2006թ. N 430-Ն հրամանի համապատասխանում է «Պատի բետոնե իրեր, սյուներ, փչացած և աղտոտված բետոնային սալիկներ» տեսակին, դասիչ՝ 39901200 01 00 4, վտանգավորության դաս՝ IV:

Շինարարական աղբը կտեղափոխվի Բալահովիտի համայնքապետի կողմից հատկացված աղբավայր:

6.1.6. Ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա

Ինչպես նշվել է, գործունեությունը նախատեսվում է իրականացնել Բալահովիտ համայնքի արտադրական գոտում, որտեղ չկան բնական բուսածածկ և վայրի կենդանիների բնակավայրեր:

6.1.7. Սոցիալական ազդեցությունը

Սոցիալական ազդեցության գործոններն են շինարարական աշխատանքները, նոր աշխատատեղերի ստեղծումը, հողօգտագործում և հողի ձեռքբերում, առողջության և անվտանգության հարցեր, ենթակառուցվածքների վրա հավելյալ լարվածություն, գեղեցիկ ասպեկտներ, տեղական աշխատուժ, ժողովրդագրական խնդիրներ:

Շինարարական աշխատանքների ընթացքում այս բոլոր գործոնները չեն ունենա եական ազդեցություն, քանի որ շինարարական հրապարակը գտնվում է զգալի հեռավորության վրա բոլոր ընկալիչներից, առաջին հերթին բնակելի թաղամասերից: Մինևույն ժամանակ այս ընթացքում կստեղծվեն աշխատատեղեր, ընդհանուր 65, որոնք թույլ կտան 65 ընտանիքներին բարելավել իրենց կենսամակարդակը:

6.2. Շահագործման փուլ

6.2.1. Օդի աղտոտում

Գործարանի շահագործման ժամանակ ազդեցությունը պայմանավորված կլինի կաթսայատան աշխատանքով, որը ցուրտ եղանակին կիրականացնի ջեռուցում: Տաք ջրամատակարարումը կիրականացվի արևային մարտկոցների միջոցով՝ ամբողջ տարվա ընթացքում:

Կաթսայատանը նախատեսվում է տեղադրել ժամանակակից արտադրության ջրաջեռուցիչ գազային կաթսաներ, որոնց աշխատանքի ժամանակ առաջանում են նվազագույն քանակով ազոտի երկօքսիդ և ածխածնի օքսիդ:

Ջմեռային շրջանում առավել ցուրտ եղանակին գազի ծախսը կկազմի 200 մ³: Տարեկան գազի ծախսը պայմանավորված կլինի ձմեռային շրջանի տևողությամբ և ցուրտ օրերի քանակով: Ըստ նախնական գնահատման գազի տարեկան ծախսը կկազմի՝ 216 հազ.մ³:

Արտանետումների աշվարկը կատարվել է ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Մինչև 5.8 ՄՎտ դրվածքային հզորությամբ պինդ, հեղուկ և գազային վառելիքով աշխատող կաթսայատների վնասակար նյութերի արտանետումների հաշվարկի մեթոդական ցուցումներ”-ի:

Արտանետումների հաշվարկները կատարվում են հիմնվելով տեսակարար գործակիցների վրա, որոնք են.

Աղյուսակ 6.1. Արտանետումների եսակարար գործակիցներ

Վնասակար նյութի անվանումը	Չափման միավորը	Տեսակարար գործակիցը
NOx	գ/կՎտժ	0.252
CO	գ/կՎտժ	0.07

Ջերմային էներգիայի քանակները հաշվարկվել են ըստ բնական գազի տարեկան պահանջարկի:

Բնական գազի տարեկան ծախսը նախատեսված է 216000 մ³, իսկ առավելագույն ժամայինը՝ 200 մ³/ժամ:

ՀՀ ներմուծվող բնական գազի միջին ջերմատվությունը ըստ “Գազպրոմ Արմենիա” ընկերության տվյալների, կազմում է 9.5 կվտ.ժ/մ³:

Ստորև բերված են արտանետումների հաշվարկների արդյունքները աղյուսակի ձևով:

Աղյուսակ 6.2. Արտանետումների հաշվարկների արդյունքները

N	Կաթսա	Գազի ծախսը, մ ³ /ժամ	Արտադրվող ջերմ. էներգիան, կվտ.ժ	Ազոտի երկօքսիդ		Ածխածնի օքսիդ	
				Տեսակարար գործակից, գ/կՎտժ	Արտանետում, գ/ժամ (գ/վրկ)	Տեսակարար գործակից, գ/կՎտժ	Արտանետում, տ/տարի
1	Այրիչներ	200.0	1900	0.252	478.8 (0.133)	0.07	133 (0.037)

Նույն եղանակով հաշվարկվել են տարեկան արտանետումները՝ առավելագույն 216000 մ³ գազի այրման համար: Ըստ այդմ արտանետումները կազմել են.

Ազոտի երկօքսիդ՝ 0.506 տ/տարի

Ածխածնի օքսիդ՝ 0.14 տ/տարի:

6.2.2. Գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ

Արտանետումների ազդեցությունը գնահատելու համար կատարվել է դրանց ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ, որոնք համեմատվել են բնակավայրերի համար սահմանված սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) հետ:

Հաշվարկը կատարվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարի հրամանով հաստատված “Էռա” (“Эра”) համակարգչային ծրագրով:

Որպես ֆոնային ցուցանիշներ օգտագործվել են սույն ՇՄԱԳ հաշվետվության 3.8. բաժնում բերված մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի հաշվարկային արժեքները:

Հաշվի առնելով, որ բարձրությունների տարբերությունը 2 կմ շաղավղով չի գերազանցում 50 մ, ռելիեֆի գործակիցը ընդունվել է 1:

Արտանետման աղբյուրի բնութագրերը և արտանետվող վնասակար նյութերի քանակները բերված են աղյուսակ 6.3-ում:

Աղյուսակ 6.3. Արտանետումների աղբյուրի բնութագրերը և արտանետումների քանակները

Արտադրության, տեղամասի անվանումը	Արտանետումների առաջացման աղբյուրները		Արտանետման աղբյուրը	Արտանետման աղբյուրի համարը	Արտանետման աղբյուրի բարձրությունը, H, մ	Աղբյուրի տրամագիծը, մ	Արտանետման արագությունը, մ/վրկ	Արտանետման ջերմաստիճանը T°C
	անվանումը	քանակը						
1	2	3	4	5	6	7	8	9
Կաթսայատուն	Գազային այրիչ	2	Խողովակ	1	11.0	0.3	12.0	90

Աղյուսակ 6.3.-ի շարունակությունը

Մաքրման ենթակա նյութերի Ապահովվածության գործակիցը, %	Մաքրման նվազագույն աստիճանը	Աղբյուրի կորդինատները քարտեզ սխեմայի վրա				Նյութերի անվանումը	Արտանետումների քանակները	
	Մաքրման առավել. չափը, %	X ₁	X ₂	Y ₁	Y ₂		գ/վրկ	տ/տարի
1 0	1 1	1 2	1 3	1 4	1 5	1 6	1 7	1 8
-	-	170	-	55	-	❖ NO ₂ ❖ CO	0.133 0.037	0.506 0.14

Գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքները կցված են սույն հաշվետվության հավելվածների մասում:

Հաշվարկները ցույց տվեցին, որ բոլոր նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների առավելագույն արժեքները, հաշվի առնելով նաև ֆոնային ցուցանիշները, չեն գերազանցում սահմանված ՄԹԿ-երը:

Ստորև ներկայացված են հաշվարկների արդյունքները:

Աղյուսակ 6.4. Գետնամերձ կոնցենտրացիաները

№	Արտանետվող նյութի անվանումը	ՄԹԿ միանվագ առավելագույն, մգ/մ ³	Առավելագույն գետնամերձ կոնցենտրացիաները, ՄԹԿ մասով
2	Ազոտի երկօքսիդ	0.2	0.284514
3	Ածխածնի օքսիդ	5.0	0.08185

6.2.3. Ջրօգտագործում և ջրահեռացում

a. Ջրօգտագործում

Գործարանի շահագործման ժամանակ ջուրը արտադրական նպատակներով կօգտագործվի լուծույթների պատրաստման, սարքերի, տարողությունների լվացման և տարածքների խոնավ մաքրման համար: Ինչպես նաև ջուր կօգտագործվի անձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար:

Արտադրական ջրօգտագործում

Հիմք ընդունելով “Արփիմեդ” ՍՊԸ Աբովյան քաղաքում գործող դեղագործական արտադրության տվյալների վերլուծությունը, նաև հաշվի առնելով Բալահովիտի նախատեսվող գործարանի արտադրանքի ցանկը, հզորությունները և գործընթացները, արտադրական արտահոսքը առաջին տարում կկազմի 520 մ³, իսկ սկսած երկրորդ տարուց՝ 1040 մ³/տարի:

Բոլոր արտադրական տեղամասերը կահավորված կլինեն արտահոսքերի հավաքման առանձին ցանցով, ներառյալ նաև հատակների լվացումը: Ցանցը կհավաքվի մեկ խողովակի մեջ և կհոսի կոյուղաջրերի մաքրման կայան:

Խմելու կենցաղային նպատակներ

Խմելու կենցաղային

Ջրի հաշվարկային ծախսերը որոշվում են համաձայն ՇՆ 2.04.01-25 չափաքանակների:

Մեկ արտադրական/լաբորատոր աշխատակցին - 25լիտր

Մեկ վարչական աշխատողին - 16լիտր

Աշխատողների հաշվարկային թիվը կազմում է 180 մարդ, այդ թվում՝ 20 վարչական աշխատող:

Արտադրության աշխատանքային ռեժիմը – տարեկան 260 օր, 8 ժամ/օր:

Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը կազմում է՝
 $W_{\text{խ.տ.}} = (n_1 \times N_1 + n_2 \times N_2) \times T$, որտեղ

n_1 – վարչական աշխատողների թվաքանակն է՝	20 մարդ
N_1 – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝	0.016 մ ³ օր/մարդ
n_2 – արտադրական անձնակազմի թվաքանակն է՝	160 մարդ
T - աշխատանքային օրերի թիվն է՝	260օր

$$W_{\text{խ.տ.}} = (20 \times 0.016 + 160 \times 0.025) \times 260 = 1123.2 \text{ մ}^3/\text{տարի:}$$

Օրական՝ 4.32 մ³/օր:

Ցնցուղների ջրապահանջ

Ցնցուղները սպասարկում են օրական 160 մարդ, մեկ մարդու ջրապահանջը՝ 70լ:

$$160 \times 0.07 \times 260 = 2912.0 \text{ մ}^3/\text{տարի}, 11.2 \text{ մ}^3/\text{օր:}$$

Մենդի պատրաստման ջրապահանջը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$W_{\text{ս.օ.}} = 0.016 \times N \times T,$$

0.016 – մեկ ճաշատեսակ պատրաստելու համար ջրի ծախսի նորմատիվն է

N – ճաշարանի օրական սպասարկելու ունակությունն է, 180

T – տարեկան աշխատանքային օրերի թիվն է, 260

$$W_{\text{ս.օ.}} = 0.016 \times 160 \times 260 = 665.6 \text{ մ}^3/\text{տարի}$$

Միջին օրական՝ 2.56 մ³/օր:

Ընդամենը խմելու և տնտեսական ջրապահանջը կազմում է՝

$$1123.2 + 2912.0 + 665.6 = 4700.8 \text{ մ}^3/\text{տարի}$$

$$\text{Օրական՝ } 4.32 + 11.2 + 2.56 = 18.08 \text{ մ}^3/\text{օր:}$$

Ոռոգման ջրապահանջի հաշվարկ

Ոռոգման ջրապահանջը կկազմի՝

$$W_{\text{ոռ.}} = 0.003 \times S \times k \times T$$

S – ոռոգման ենթակա տարածքների մակերեսն է, 7612.5 մ²,

k - ջրման քանակն է օրվա ընթացքում, 1 անգամ,

T – տարվա ընթացքում ջրման օրերի թիվն է, 150 օր.

$$W_{\text{ոռ.}} = 0.003 \times 7612.5 \times 1 \times 150 = 3425.6 \text{ մ}^3/\text{տարի}$$

Միջին օրական՝ 22.8 մ³/օր:

Հաշվարկված ծավալի 20.8 մ³ կծածկվի մաքրված կոյուղաջրերի հաշվին, իսկ մնացած 2 մ³՝ համայնքային ջրատարից:

բ. Ջրահեռացում

Արտադրական արտահոսքի ծավալները հաշվարկվում են հետևյալ կերպ.

$V_{\text{կոյուղի}} = W_{\text{արտադր.}} \times (1 - \Psi)$, որտեղ՝

Ψ ՝ կորուստները, ընդհանրացված 10 տոկոս /0.1/, կորուստները հիմնականում պայմանավորված են հատակների լվացման ընթացքում գոլորշիացմամբ:

$V_{\text{կոյուղի}} = 1040 \times (1 - 0.1) = 936.0$ մ³/տարի կամ 3.6

Տնտեսական կենցաղային հոսքաջրեր

Ոռոգման արդյունքում արտահոսք չի առաջանում: Խմելու տնտեսական կոյուղաջրերի հաշվարկային քանակը կկազմի՝

$V_{\text{կոյուղի}} = W_{\text{կենցաղ.}} \times (1 - \Psi)$, որտեղ՝

Ψ ՝ կորուստները, ընդհանրացված 5 տոկոս /0.05/,

$W_{\text{խ.տ.}}$ ՝ կենցաղտնտեսական ընդհանուր ջրապահանջը, 4700.8 մ³/տարի:

$V_{\text{կոյուղի}} = 4700.8 \times (1 - 0.05) = 4465.8$ մ³/տարի կամ 17.18 մ³/օր:

Ընդամենը ջրահեռացումը կկազմի՝ $936 + 4465.8 = 5401.8$ մ³/տարի կամ 20.8 մ³/օր:

Մաքրված կեղտաջրերը տաք եղանակի շրջանում /150 օր/ կօգտագործվեն ոռոգման նպատակով, տարվա մնացած ժամանակի համար նախատեսվում է լառուցել կոյուղու արտաքին խողովակ, որը կմիանա Կոտայք գարեջրի գործարանի կոյուղատարին:

Աղյուսակ 6.5. Ջրօգտագործման և ջրահեռացման ամփոփ ծավալները

Ջրօգտագործման նպատակը	Ջրօգտագործում (թարմ), մ ³ /տարի	Ջրի կորուստ		Ջրահեռացում, մ ³ /տարի
		%	մ ³ /տարի	
Արտադրական				
Լուծույթների պատրաստում, սարքերի և տարայի լվացում, սանիտարական մաքրում	1040.0	10	104.0	936.0
<i>Ընդամենը արտադրական</i>	<i>1040.0</i>	<i>10</i>	<i>104.0</i>	<i>936.0</i>
Խմելու տնտեսական				
Աշխատողների խմելու կարիքներ	1123.2	5	56.1	1067.1
Ցնցուղարան	2912.0	5	145.6	2766.4
Ճաշարան	665.6	5	33.3	632.3
<i>Ընդամենը խմելու տնտեսական</i>	<i>4700.8</i>	<i>5</i>	<i>235.0</i>	<i>4465.8</i>
Օժանդակ				
Ոռոգում	3425.6	100	3425.6	-
<i>Ընդամենը օժանդակ</i>	<i>3425.6</i>	<i>100</i>	<i>3425.6</i>	<i>-</i>
Ընդամենը	9166.4	-		5401.8

գ. Կեղտաջրերի մաքրում

Նախատեսված է իրականացնել արտադրական արտահոսքի և կենցաղային կոդտաջրերի մաքրում մաքրման կայանի միջոցով:

Մքրման կայանը նախատեսված է կլինիկական և կենցաղային կեղտաջրերի մաքրման համար: կայանի հզորությունը կազմում է 70 մ³/օր:

Կայանի տեխնոլոգիական սխեման ներառում է հետևյալ գործընթացները.

1. Կեղտաջրերի հավաքման և միջինացման տարողություն
2. Կոնտակտային օքսիդացում
3. Միջանկյալ նստեցում
4. Երկրորդային նստեցում
5. Նստվածքի խտացում
6. Հիդրոլիզ և թթվեցում
7. PH կարգաբերման տարողություն
8. Ֆլոկուլյացիայի տարողություն
9. Ֆլոկուլյացիայի նստեցման տարողություն
10. Կեղտաջրերի հակաքաղցկեղային դեզակտիվացում
11. Կեղտաջրերի հակաբիոտիկ դեզակտիվացում
12. Կեղտաջրերի հորմոնալ դեզակտիվացում:

Մաքրման կայանը ապահովումը է մաքրված ջրերի այնպիսի որակ, որ դրանք կարելի է օգտագործել ոռոգման նպատակով, կամ ուղղել համայնքային կոյուղու ցանց:

Ըստ արտադրող կազմակերպության տվյալների մաքրման կայանի արդյունավետությունը հետևյալն է.

Աղյուսակ 6.6. Մաքրման կայանի արդյունավետությունը

№	Նյութերի անվանումը	Մաքրման աստիճանը, %
1.	ԹԿՊ _{լրիվ}	70 - 90
2.	ԹՔՊ	70 - 90
3.	կախված մասնիկներ	80 - 92

Ստորև բերված են քարման կայանում մաքրված ջրերի որի նախնական գնահատման ցուցանիշները

Աղյուսակ 6.7. Արտահոսքի որակի գնահատումը

№	Նյութերի անվանումը	Բալահովիտի գործարանի արտահոսքի ջրի որակի գնահատման ցուցանիշները	Սահմանափակում քաղաքային կոյուղու կոլեկտորում, գ/մ ³
1.	ԹԿՊ _{լրիվ}	17 – 30	240.00
2.	ԹՔՊ	50 – 60	360.00
3.	կախված մասնիկներ	20 - 30	215.00

Ըստ մաքրման կայանը արտադրող կազմակերպության տվյալների կեղտաջրերում պարունակվող նյութերի յուրաքանչյուր կիլոգրամից առաջանում է 350 գրամ նստվածք: Ելնելով կեղտաջրերի վերը ներկայացված ցուցանիշներից 70 մ³/օր կեղտաջրերը կպարունակեն միջին հաշվով 210 կգ լուծված նյութեր և կախույթներ, որոնցից կառաջանա 73 կգ նստվածք: Տարեկան՝ 18980 կգ կամ մոտավորապես 19 տ նստվածք:

Նստվածքը իրենից ներկայացնում է հիմնականում օրգանական նյութերի խառնուրդ՝ տիղմի տեսքով, որի միջին խոնավությունը կկազմի 65 տոկոս, չոր նստվածքի կազմը. օրգանական միացություններ՝ 68 - 70%, հանքային նյութեր (минералы)՝ 30 - 32%:

Տիղմը համարվում է բարձրակարգ պարարտանյութ, որը լայնորեն օգտագործվում է գյուղատնտեսությունում: Համայնքապետարանի հետ հանդիպումների ընթացքում քննարկվել են տիղմի գյուղացիներին տիղմի մատակարարման հարցերը: Տիղմը գյուղացիները տեղափոխելու են սեփական տրանսպորտային միջոցներով:

6.2.4. Թափոններ

ա. Արտադրական թափոններ

«Արփիմեդ» դեղագործական գործարանի շահագործման ընթացքում առաջանում են արտադրական և կլինիկական թափոններ, որոնց քանակությունը ներկայացվում է աղյուսակում:

Աղյուսակ 6.6. Բալահովիտի դեղագործական գործարանի նախատեսվող թափոնները

<i>Թափոնատեսակի անվանում</i>	<i>Տարեկան քանակը</i>
ՊՎՔ (Պոլիվինիլքլորիդային) թաղանթի թափոն (տարեկան)	400կգ
Ալյումինե ժապավենի թափոն (տարեկան)	150կգ
Հակաբիոտիկների թափոն (տարեկան) ցեֆալոսպորիններ	10կգ
Հակաուռուցքային դեղերի թափոն (տարեկան)	0.2կգ
Օգտագործվող ախտահանիչներ (տարեկան)	Էթիլ սպիրտ 70%– 50լ Ջրածնի պերօքսիդ 6% - 20լ Արփի-Մ – 50լ Իզոպրոպիլ սպիրտ 70% - 20լ
Արտադրվող լուծույթների թափոն (տարեկան) Օշարակներ Արտաքին օգտագործման լուծույթներ Բերանի ողորման լուծույթներ Օճառահեղուկներ	50լ
Այլ խտտան դեղեր (տարեկան)	100կգ
Փորձաքննության նպատակով օգտագործվող լուծիչների թափոններ (տարեկան)	Մեթանոլ – 1տ Ացետոնիտրիլ – 1տ

Քանի որ բոլոր նշված թափոնները հանդիսանում են դեղամիջոցներ, կամ դեղամիջոցների հետ առնչվող նյութեր, դրանք ըստ ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N 342-Ն հրամանի վերաբերվում են ընդհանուր առողջապահական թափոններին շարքին և հանդիսանում են “Դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ, դեղամիջոցներ, դեղագործական ապրանքներ, այդ թվում անբոցոլներ՝ փչացած, ժամկետանց, ոչ պիտանի կամ չնույնականացված մնացորդներ և փոշի” տեսակի թափոններ, դասիչ՝ 9703010 13 01 4:

Բոլոր նշված թափոնները, «Արփիմեդ» ՍՊԸ Աբովյանի գործարանի թափոնների հետ, նախատեսվում է տեղափոխել համապատասխան լիցենզավորված «Էկոլոգիա» ՍՊԸ թափոնների վնասագերծման կայան, համաձայն գործող պայմանագրի: ՊՎՔ և ժապավենի թափոնները նույնպես տեղափոխվում են «Էկոլոգիա» ՍՊԸ, քանի որ դրանք կապված են դեղամիջոցների և լուծույթների հետ:

բ. Կենցաղային աղբ

Բալահովիտի գործարանի շահագործման ընթացքում առաջանում է նաև կենցաղային աղբ և գրասենյակային թափոն:

Կենցաղային թափոնները՝ 57.6 մ³/տարի ծավալով հավաքվում են աղբամաններում և պարբերաբար տեղափոխվում Բալահովիտի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

Ելնելով «Արփիմեդ» ՍՊԸ Աբովյանի գործարանի փորձից սպասվում է, որ Բալահովիտի գործարանի շահագործման ընթացքում կառաջանա 800 – 1000 կգ թղթի և

ստվարաթղթի թափոն, որոնք ըստ ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N 342-Ն հրամանի հանդիսանում են “Թղթի և ստվարաթղթի տարատեսակ թափոններ” տեսակի թափոն, դասիչ՝ 18790100 01 00 4: Այս թափոնները գործող պայմանագրի շրջանակներում կվաճառվեն «Սոֆտեքս» ՍՊԸ թղթի վերամշակման լիցենզավորված ձեռնարկությանը:

7. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿ

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ = ՀԱԳ + ՋԱԳ + ՕԱԳ,$$

որտեղ՝

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ,

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն որոշման համաձայն:

ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման համաձայն:

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշման համաձայն:

Հաշվի առնելով վերը բերված հիմնավորումները, ազդեցություն ջրային ռեսուրսների և հողածածկի վրա չի սպասվում, համապատասխանաբար տնտեսական վնաս հաշվարկվում է միայն մթնոլորտային արտանետումների համար:

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է արտահայտած դրամական համարժեքով:

Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,
- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսություններին հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

Տնտեսական վնասը հաշվարկվել է համաձայն ՀՀ կառավարության 25.01.2005թ. N 91-Ն որոշմամբ հաստատված “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ”-ի

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով`

$$U = \tau_q \Phi_g \sum \varphi_i \phi_i, \text{ որտեղ}$$

U -ն ազդեցությունն է, արտահայտված ՀՀ դրամերով,

τ_q -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9րդ աղյուսակի արտադրական հրապարակների համար ընդունվում է 4:

Φ_g -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է` ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Մույն կարգի համաձայն $\Phi_g = 1000$ դրամ:

φ_i -ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է:

ϕ_i -ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

ϕ_i գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով`

$$\phi_i = q (3 S_{ui} - 2 U \theta U_i), S_{ui} > U \theta U_i (2)$$

որտեղ`

$U \theta U_i$ -ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է` տոննաներով:

S_{ui} -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են` տոննաներով:

Հաշվի առնելով, որ վնասակար նյութերի արտանետումների մթնոլորտում ցրման հաշվարկները ցույց տվեցին, որ սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում, $\phi_i = S_{ui}$

$q = 1$ ` անշարժ աղբյուրների համար,

$q = 3$ ` շարժական աղբյուրների համար:

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Աղյուսակ 7.1.

Արտանետվող նյութերի անվանումը	Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները			Վ	Շ _q	Տնտեսական վնասը. ՀՀ դրամ
	S _i	q	ϕ _i =S _i x q			U = τ _q Φ _g ∑ ϕ _i ϕ _i
Ածխածնի մոնօքսիդ	0.14	1	0.14	1	4	0.56
Ազոտի երկօքսիդ	0.506	1	0.506	12.5	4	25.3
Ընդամենը						25.86

ԸՆդամենը տնտեսական վնասը կկազմի` 25830 դրամ/տարի:

8. ԱՂՏՈՏՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

8.1. Բնապահպանական ռիսկեր

Նախատեսվող գործունեության ազդեցությունը ներկայացված է իրագործման երկու փուլերի համար.

- շինարարական աշխատանքներ,
- գործարանի շահագործում:

Նախատեսվում է 2 տարվա ընթացքում իրականացնել շինարարական աշխատանքները, այդ թվում՝ շինությունների, պահեստարանների, օժանդակ կառույցների կառուցումը:

Շինարարական աշխատանքների ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են փորման - բարձման աշխատանքների, հողային զանգվածների և շինադրի տեղափոխման ժամանակ փոշու արտանետումով, շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ վնասակար գազային արտանետումներ և տեխնիկայի շահագործման պինդ թափոններ, շինարարական նյութերի թափոններ և այլն:

Շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում կավելանա աղմուկի մակարդակը, կմեծանա մթնոլորտային օդ արտանետվող վնասակար գազերի և փոշու քանակությունը: Հողային աշխատանքների, հողային զանգվածի և շինադրի տեղափոխման աշխատանքների ժամանակ կմեծանա համայնքային ճանապարհների ծանրաբեռնվածությունը, Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ շահագործման հետևանքով հնարավոր է առաջանան խցանումներ:

8.1.1. Մթնոլորտային օդ

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում առաջանում են արտանետումներ, որոնց աղբյուրներն են՝

- փոշու արտանետումներ հողային աշխատանքների ընթացքում,
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի

շահագործման ժամանակ:

Նախատեսվող աշխատանքների ընթացքում կառաջանան հետևյալ վնասակար նյութերի արտանետումները. չդիֆերենցված մասնիկներ /փոշի/, ածխածնի մոնօքսիդ, ազոտի երկօքսիդ, մուր /մոխիր, ծծմբի երկօքսիդ:

8.1.2. Ջրային ռեսուրսներ

Շինարարության ընթացքում տեխնիկական որակի ջուրը կօգտագործվի հողային աշխատանքների ընթացքում տարածքի ջրցանի, գրունտերի խոնավացման

նպատակով, իսկ խմելու որոկի ջուրը՝ անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար:

Ջրառը կիրականացվի համայնքային ջրատարից՝ գործող ցանցի հաշվին, կեղտաջրերի հեռացման նպատակով կարիք կլինի տեղադրել կեղտաջրերի հավաքման հոր:

8.1.3. Հողային ռեսուրսներ

Կարիք չի լինի կատարել հատկացված հողատեսքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխություն, հողի ձեռքբերում կամ/և հարկադիր վերաբնակեցում: Շինարարության ընթացքում օգտահանվում է բերրի հողի որոշակի ծավալ, որը կպահեստավորվի շինարարության հրապարակին հարակից տարածքում: Բերրի հողի այս զանգվածը կօգտագործվի տարածքի բարեկարգման նպատակով և ՏԻՄ – ի հայեցողությամբ: Շինարարության ավարտին խախտված հողատարածքները բարեկարգվում են և կանաչապատվում:

8.1.4. Կենսաբազմազանություն

Շինարարության ընթացքում խախտվում է „Արփիմեդ,, գործարանի շինարարության համար հատկացված հողամասի մակերեսի հիմնական մասը, որոշ տեղամասեր օգտագործվում է որպես շինանյութի ու տեխնոլոգիական սարքավորումների, բերրի հողի և շինարարական պինդ թափոնների ժամանակավոր պահեստարաններ: Այս ժամանակամիջոցում վերանում է հողամասի նոսր խոտածածկույթը, պահպանվում են առկա ծառերը /15-20 ծառ/: Շինարարական աշխատանքների ավարտից հետո հողամասի այն տեղամասերը, որոնք չեն զբաղեցվի շենքերի և ենթակառուցվածքների տակ, կբարեկարգվեն և կկանաչապատվեն, կտնկվեն ծառեր և թփեր, կստեղծվի նոր էկոլոգիական բիոտոպ, որը ժամանակի ընթացքում կյուրացվի նոր բույսերի և կենդանիների կողմից:

8.1.5. Պատմամշակութային միջավայրը

„Արփիմեդ,, գործարանի շինարարության համար հատկացված տարածքում չկան պատմամշակութային անշարժ հուշարձաններ և հետևաբար շինարարության հետևանքով պատմամշակութային միջավայրը ազդեցություն չի ունենա:

8.1.6. Սոցիալական ազդեցությունը և ռիսկերը

„Արփիմեդ,, գործարանի շինարարությունը կառաջացնի դրական և բացասական սոցիալական ազդեցություն: Նախատեսվող շինարարությունը չի առաջացնի սոցիալական խնդիրներ *հողօգտագործման և հողի ձեռք բերման* հարցերում:

Ազդեցություն չի լինի նաև պատմամշակութային միջավայրի, *բնակչության ավանդույթների, սոցիալական հիշողության և սիրած վայրերի հետ կապված*: Որոշակի փոփոխություն կկրի տարածաշրջանի համայնապատկերը:

Չկան նկատելի ռիսկեր *ժողովրդագրական և գենդերային* հարցերում, չկան *սոցիալական խոցելի խմբեր կամ մարդիկ*, որոնց վրա նախատեսվող գործունեությունը կարող է ունենալ բացասական ազդեցություն:

„Արփիմեդ „ գործարանի շինարարության արդյունքում բացասական ռիսկերը կապված են բնակչության առողջության /փոշի, աղմուկ, արտանետումներ/ և անվտանգության /տրանսպորտային երթևեկության ինտենսիվացում, աշխատանքի անվտանգություն/ հարցերի հետ: Որոշակիորեն կմեծանա ենթակառուցվածքների ծանրաբեռնվածությունը /ճանապարհներ, էլեկտրամատակարարում, ջրամատակարարում և ջրահեռացում, կապ/ և ռեսուրսների սպառումը: Չի բացառվում նաև բնակչության զբաղմունքի և գոյություն ունեցող բիզնես համակարգերի փոփոխություններ /դրական և բացասական առումով/, եթե գործարանի մասնաբաժինը համայնքի աշխատուժի օգտագործման և համախառն արդյունքի ստեղծման մեջ ունենա զգալի մասնաբաժին:

„Արփիմեդ „ գործարանի շինարարությունը և շահագործումը կունենա նաև դրական ազդեցություններ: Մասնավորապես դա կարտահայտվի ենթակառուցվածքների /օրինակ՝ ճանապարհների, էներգամատակարարման/ և ծառայությունների բարելավմամբ, առողջապահական, կրթական ու մշակութային միջոցառումների հասանելիությամբ, կտա զբաղվածության և բիզնես միջավայրի նոր հնարավորություններ: Եկամուտների հոսքի մեծացումը կբարձրացնի բնակչության և համայնքի հնարավորությունները, կզարգացնի համայնքի ընդհանուր բարեկեցությունը:

Ընկերության և համայնքի ղեկավարը պայմանավորվում են ընկերության մասնակցության մասին, որով նախատեսվում է համայնքի սոցիալական զարգացման միջոցառումների մասնակցություն: Պարբերական հանդիպումներով պայմանավորվող կողմերը ճշտում են սոցիալական պայմանագրի դրույթների կատարումը, անհրաժեշտության դեպքում շտկում պլանները:

„Արփիմեդ„ դեղագործական գործարանի արտանետումները և վնասակար ազդեցությունը, որոնք կարող են ազդել *բնակչության առողջության և անվտանգության* վրա, նախատեսվում է պահել սահմանված նորմատիվներից ցածր մակարդակում: Անվտանգության խնդիրներ կարող են ծագել շինարարության, արտադրական գործընթացների և բեռների տեղափոխման *գործընթացում աշխատանքի անվտանգության կանոնների խախտման հետևանքով*: Մերձակա բնակչության վրա ֆիզիկական ազդեցությունները /աղմուկը, արտանետումներ/ կանխելու նպատակով կազմվում է ավտոտրանսպորտային միջոցների երթևեկության պլան: Բեռնատար մեքենաները պետք էրթևեկեն միայն ցերեկային ժամերին, պետք է ապահովել երթևեկության հավասարաչափ ժամանակացույց: Ճանապարհների վրա պետք է տեղադրվեն նախազգուշացնող հատուկ ցուցանակներ: Աշխատանքները պետք է կատարվեն ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին, աշխատանքների անվտանգության նորմատիվային փոստաթղթերին և այլ նորմատիվ ակտերին համապատասխան:

Նախատեսվում է, որ գործարանի շինարարության և շահագործման համար նախապատվությունը կտրվի *տեղական աշխատուժին*: Արտադրական աշխատանքներում կներգրավվեն և՛ տղամարդիկ, և՛ կանայք, առանց խտրականության հետևաբար գործարանի շահագործումը չի առաջացնի լրացուցիչ *գենդերային լարվածություն կամ ժողովրդագրական փոփոխություններ*:

8.1.7. Գումարային (հավաքական) ազդեցություն

Նախատեսվող գործունեության ազդեցությունը լիարժեքորեն գնահատելու համար, անհրաժեշտ է այն դիտարկել տարածքի նմանատիպ աղտոտող գործոնների հետ համալիր:

Շինարարության փուլում տեխնիկական միջոցների վառելիքի այրման արտանետումները կարող են գումարվել տարածքի մոտակայքով անցնող Երևան-Աբովյան ավտոճանապարհը, /որտեղ երթևեկության ինտենսիվությունը մեծ է՝ մոտովորապես քսան ավտոմեքենա մեկ րոպեում/: Փոշու արտանետման աղբյուր է մոտ վեց հարյուր մետրի վրա գտնվող Բազալտի խճի հանքավայրը և 2,6 կմ հեռավորության վրա գտնվող շաքի հանքավայրը: Աղմուկի մակարդակի ինտենսիվությունը գումարային ազդեցությամբ կարող է մեծանալ սահմանակից երկաթգծի երթևեկության արդյունքում:

Գործարանի շահագործման ընթացքում գումարային ազդեցություն կարող են ունենալ միայն ձմեռային շրջանի կաթսայատան արտանետումները, որոնք կարող են գումարվել շրջակայքի բնակելի տների ջեռուցման արտանետումների հետ:

8.2. Բնապահպանական և սոցիալական մեղմման միջոցառումներ

Բնապահպանական և սոցիալական մեղմման միջոցառումները նպատակ ունեն բացառել կամ հնարավորին չափով նվազեցնել հիմնադրույթային փաստաթղթով նախատեսվող գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Այդ միջոցառումները ներկայացվում են շինարարության և գործարանի շահագործման փուլերի համար ըստ ազդեցության ուղղությունների :

8.2.1. Շինարարության փուլ

ա. Մթնոլորտային օդ

Մթնոլորտային օդը փոշով աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /հողային աշխատանքներ, հին շենքերի քանդում, շինարարական աղբի բարձում և բեռնաթափում և այլն/ ընթացքում իրականացնել ջրցան: Այդ ընթացքում չպետք է առաջանան ջրցանվող ջրի հոսքեր:

- սորուն նյութերը պահեստավորվում և/կամ տեղափոխվում են թաղանթով ծածկված,

- տեխնիկա-տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում արտանետվող վնասակար նյութերի արտանետվող քանակը նվազեցնելու նպատակով

պարբերաբար ստուգվում է տեխնիկա-տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակը և իրականացվում է կարգաբերում: Տեխնիկատրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկումը կատարվում է մասնագիտացված ձեռնարկություններում:

բ. Աղմուկ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տեխնիկա-տրանսպորտային միջոցների տեղաշարժը կկազմակերպվի ցերեկային ժամերին,
- պարբերաբար կստուգվի և կկարգաբերվի տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, խլացուցիչները:

գ. Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ մեղմացնող միջոցառումները.

-տարածքի մթնոլորտային տեղումներից առաջացող հոսքերը միավորվում են առանձին հեղեղատար ցանցում, որն ունի պարզարան և միացվում է սելավային ջրահեռացման համակարգին:

- մակերևույթային հոսքերի նավթամթերքներով աղտոտվելը կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցների լվացումը և տեխնիկական սպասարկումը նախատեսվում է կատարել մասնագիտացված կազմակերպություններում կամ համապատասխանաբար կահավորված հարթակների վրա,

-կենցաղային հոսքաջրերը հավաքվում են կեղտաջրերի հավաքման ժամանակավոր հորում և պարբերաբար տեղափոխվում մոտակա կոյուղու համակարգ:

դ. Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- շինանյութերի և քսայուղերի պահեստները և տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործումից առաջացող թափոնները կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա, շինարարական աղբը կհավաքվի առանձին և հնարավորինս կարճ ժամանակում կհեռացվի շինհրապարակից:

- բերրի հողը կօգտահանվի, կպահեստավորվի և կտնօրինվի ՀՀ կառավարության 02 10 2017 թ N 1404-Ն պահանջներին համապատասխան, այս միջոցառման շրջանակներում բերրի հողը կհանվի, կտեղափոխվի տարածքի հյուսիս-արևելյան հատված՝ ցանկապատի անկյունային մասում, որտեղ նախապես կտոփանվի հողաձածկը, կկազմակերպվի արգելափակող սահմանազատիչների կառուցում (ծորժյօր) և ծածկ: Աշխատանքների ավարտից հետո բերրի հողը կօգտագործվի տարածքի բարեկարգման և կանաչապատման նխատակով:

-կենցաղային կոշտ թափոնները կհավաքվեն այդ նպատակի համար կահավորված տեղում և կտեղափոխվեն համայնքային աղբավայր,

-աշխատանքների ավարտից հետո աղբից կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված աղբավայր,
-շինարարական տեխնիկայի տեղաշարժը կկարգավորվի համապատասխան սխեմայով և թույլատրված տեղերում,
-տարածքը կբարեկարգվի:

ե. Կենսաբազմազանություն

Տարածքները, որոնց հողածածկը թեկուզ ժամանակավոր չեն խախտվի, կպահպանվեն անխաթար: Դա կարող է շարժուն կենդանատեսակների համար հանդիսանալ որպես ժամանակավոր ապաստարան: Ծառերը և թփերը հնարավորինս կպահպանվեն, սաղարթախիտ ծառերի պահպանության մասին հնարավոր է մտածել դեռ նախատեսվող գործունեության նախագծման փուլում: Քարակույտերի տեղափոխումը հնարավորինս կիրականացվի փուլերով՝ հնարավորություն տալով սողուններին հեռանալ տարածքից անվնաս:

Նախատեսվում է կանաչապատել տարածքի բոլոր այն տեղամասերը, որոնցում չի լինի շինություն կամ ենթակառուցվածք: Կանաչ տարածքները կներառեն սիզամարգերով պատված մասեր, ծառեր:

ը. Սոցիալական ոլորտ

Սոցիալական ոլորտի վրա ազդեցության մեղմացման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

-հնարավորինս կնվազեցվի և կվերահսկվի աղմուկի մակարդակը և վնասակար նյութերի արտանետումները տեխնիկատրանսպորտային միջոցներից թույլատրելի սահմաններում՝ ըստ այդ միջոցների տեխնիկական անձնագրի,

-խստորեն կկիրառվի անվտանգ աշխատանքի կանոնները, անձնակազմը կապահովվի այդ նպատակով նախատեսված նյութերով, գործիքներով, տեխնիկական միջոցներով, կգործի ուսուցման /հրահանգավորման/, գիտելիքների ստուգման և վերահսկման համակարգ աշխատանքի անվտանգության նպատակով,

-կապահովվի կենցաղային և սանիտարահիգիենիկ բավարար պայմաններ աշխատակազմի համար,

-հնարավորինս աշխատուժը կհավաքագրվի համայնքի բնակիչներից, անհրաժեշտության դեպքում կգործեն աշխատուժի ուսուցման, պատրաստման և վերապատրաստման կուրսեր:

-ըստ անհրաժեշտության կբարելավվեն ենթակառուցվածքները, անհրաժեշտության դեպքում նախատեսվող գործունեության համար կստեղծվեն համայնքի ենթակառուցվածքներից անկախ ճանապարհներ, էլեկտրամատակարարում, ջրամատակարարում և այլն,

-կիրականացվեն սոցիալական մեղմացման միջոցառումներ, այդ մասին պայմանավորվելով ՏԻՄ ղեկավարության հետ:

8.2.2. Գործարանի շահագործման փուլ

„Արփիմեդ“, գործարանի շահագործման փուլում հիմնականում կգործեն շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցության մեղմման նույնանման միջոցառումները, որոնք նախատեսվում են իրականացնել շինարարության փուլում:

ա. Մթնոլորտային արտանետումներ

Շահագործման փուլում մթնոլորտային օդի վրա ազդեցությունը պայմանավորված կլինի կաթսայատան աշխատանքով: Այդ ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված է տեղադրել ժամանակակից կաթսայական սարքավորումներ, որոնք ապահովում են ազոտի օքսիդների շատ ցածր մակարդակ, իսկ ածխածնի օքսիդը պլանային ռեժիմում գործնականում չի առաջանում:

բ. Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների վրա ազդեցության նվազեցման նպատակով նախատեսված հիմնական միջոցառումը բազմաֆունկցիոնալ մաքրման կայանի տեղադրումն է: Կայանի հնարավորությունները թույլ են տալիս մաքրել ինչպես արտադրական, այնպես էլ կենցաղային կեղտաջրերը, ընդ որում նախատեսված է նաև կլինիկական գործոնների չեզոքացում:

Ջրօգտագործումը նվազեցնելու նպատակով մաքրված ջրերը տարվա տաք եղանակին օգտագործվելու են կանաչ տարածքների որոգման համար:

գ. Հողային ռեսուրսներ և բուսականություն

Հողածածկի պահպանության միջոցառումները գործարանի շահագործման փուլում փոխկապակցված են գործարանի կոշտ թափոնների և հոսքաջրերի ճիշտ կառավարման խնդիրների հետ:

Գործարանի շինարարությունից հետո շինություններից ու ենթակառուցվածքներից ազատ տարածքները կկանաչապատվեն: Կառաջանա նոր էկոհամակարգ, նոր *կենսաբազմազանություն*, բուսական նոր համակեցություն և կենդանական աշխարհ: Այս նոր էկոհամակարգի պահպանության համար նախատեսվում են խնամքի և պահպանության միջոցառումներ: Կանաչապատ տարածքների նախագծումը կիրականացվի այնպես, որ ծառաշերտեր կտնկվեն գործարանի սահմանագծի երկարությամբ, որը արգելապատնեշ կհանդիսանա աղմուկի և փոշու դեմ գորշարանի և համայնքի միջև:

դ. Սոցիալական միջոցառումներ

Սոցիալական միջոցառումները լինելու են շինարարական փուլին համապատասխան: Հիմնական տարբերությունը պայմանավորված է լինելու դեղագործական գործունեության առանձնահատկություններով, որը կպահանջի անվտանգության և սանիտարական պաշտպանության առավել խսիտ միջոցառումներ, այդ թվում.

- անձնակազմը կապահովվի հանգստի սենյակներով,

- սննդի ընդունման հատուկ սենյակներով
- հատուկ արտահագուստով և դիմակներով
- կիրականացվեն անձնակազմի պարբերական բժշկական զննումներ
- տարածքը կպահվի ստերիլ վիճակում
- արտադրական տարածք մուտքի իրավունք կունենան միայն հատուկ թույլտվություն ունեցող աշխատողները
- բոլոր մատակարարները և այցելուները կենթարկվեն ջերմաչափման և կգրանցվեն հատուկ մատյաններում

8.2.3. Առողջապահական խնդիրներ

Շինարարական աշխատանքների ընթացքում անձնակազմի առողջության վրա կարող են ազդել շինարարական տեխնիկայի աղմուկը, շարժիչների աշխատանքի հետևանքով առաջացող արտանետումները, ինչպես նաև հողային աշխատանքների ընթացքում առաջացող փոշու արտանետումները: Սակայն այդ բոլոր ազդեցությունները ցածր մակարդակի և ժամանակավոր են:

Դեղագործական գործարանի շահագործման ընթացքում առողջապահական հիմնական խնդիրը պայմանավորված է դեղամիջոցների և լուծույթների հետ շփմամբ: Նշված ռիսկերը նվազեցնելու համար բոլոր աշխատատեղերը կահավորվել են տեղային օդափութայամբ, անձնակազմը ապահովված է համապատասխան ատրահագուստով և անձնական պաշտպանական միջոցներով, այդ թվում. ձեռնոցներ, դիմակներ, գլխարկներ և այլն:

Բոլոր դեպքերում թե շինարարական փուլում, թե գործարանի շահագործման ընթացքում նախատեսվում է դեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

9. ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕԴԵՐՆՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ

„Արփիմեդ,, դեղագործական գործարանի շինարարության և շահագործման ընթացքում հնարավոր են վթարային իրավիճակներ, բնական աղետներ և անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ: Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների, բնական աղետների և վթարային իրավիճակների հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար ընկերությունը մշակում է գործուղությունների ծրագիր, որը ներառում է մի շարք համապատասխան միջոցառումներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանները նպաստում են գետնամերձ շերտում վնասակար նյութերի կուտակմանը, ցրման գործընթացների դանդաղեցման պատճառով հնարավոր են վնասակար նյութերի կոնցենտրացիաների զգալի բարձրացումներ:

Ընդունված են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների 3 կատեգորիաներ, սակայն դրանց հստակ չափորոշիչները բացակայում են և դրանք որոշվում են հետևյալ սկզբունքների հիման վրա՝

- I. Քամու արագության նվազում,
- II. Անհողմություն, չոր եղանակ,
- III. Անհողմություն, թանձր մառախուղ:

Համապատասխանաբար նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝ Շինարարության փուլում.

- ավելացվում են ջրցանի ծավալները.
- կրճատվում է միաժամանակյա աշխատող մեխանիզմների քանակը.
- անհրաժեշտության դեպքում դադարեցվում են շինարարական աշխատանքները:

Շահագործման փուլում.

- խստացվում է կաթսայատան ռեժիմների վերահսկողությունը
- նվազեցվում է կաթսայատան բեռնվածությունը, թողնելով միայն ամենաանհրաժեշտ տարածքների ջեռուցումը:

Բնական աղետներին պատշաճ դիմակայելու և մեղմացման միջոցառումները ժամանակին իրականացնելու նպատակով նախատեսված է մշակել Աղետների Կառավարման Աշխատանքային նախագիծը ՏԻՄ-ի հետ համատեղ: Աղետների Կառավարման Աշխատանքային նախագիծը պետք է ներառի միջոցառումներ, որոնք առնչվում են հետևյալ խնդիրներին.

- Բնական աղետների կանխատեսում,
- Արտակարգ իրավիճակների պատրաստվածություն,
- Փրկարարական աշխատանքներ և օգնություն աղետների ժամանակ,
- Հետադեպային վերականգնում և վերակառուցում:

Բնական աղետների /փոթորիկ, երկաշարժ, հողասահքի վտանգ, անտառային հրդեհներ և այլն/ ժամանակ դադարեցվում են բոլոր աշխատանքները, անձնակազմը տեղափոխվում է անվտանգ վայր: Բնական աղետների նկատմամբ խոցելիության նվազեցման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- Պատրաստել Արտակարգ Իրավիճակներին Պատրաստվածության և Արձագանքման Աշխատանքային նախագիծ և տեղեկացնել աշխատակիցներին վերջինիս պայմանների հետ,
- Պարբերաբար գննել աղետներին հակազդելու համակարգերի աշխատունակությունը, սանիտարական պաշտպանիչ գոտու և հեղեղատարների մաքրությունը և այլն:

- Ապահովել շինարարական նյութերի, վառելիքի, նավթամթերքի, քիմիական նյութերի պահեստավորման և բեռնաթափման կանոններին համապատասխանություն,
- Վերապատրաստել աշխատակիցներին՝ արտակարգ իրավիճակներում գործելու նպատակով,
- Հաստատել հուսալի կապ համապատասխան տարածքային իշխանությունների, առաջին օգնության ծառայության, փրկարարական ծառայության, ոստիկանության, հրշեջ ծառայության, ինչպես նաև էլեկտրաէներգիայի, գազի և ջրի ծառայությունների միջև՝ արտակարգ իրավիճակներում պատշաճ արձագանք ստանալու նպատակով:

Առավել հաճախակի հանդիպող վթարային իրավիճակներից է հրդեհների ծագումը: Հրդեհավտանգ են համարվում հեղուկ վառելանյութի և այլ դյուրավատ նյութերի պահեստները, գազատարները, կաթսայատները, էլեկտրական ենթակայանները, էլեկտրական բաշխիչ վահանակները: Հրդեհի պատճառ կարող է դառնալ անխնամ գազոնները, չոր խոտը և այլն: Շինարարության և գործարանի շահագործման ժամանակ բոլոր հրդեհավտանգ հանգույցները պետք է համալրված լինեն հակահրդեհային ավտոմատ սարքավորումներով: Բոլոր այն տեղամասերը, որոնք չունեն ավտոմատ հակահրդեհային սարքավորումներ, պետք է ունենան ձեռքի կրակմարիչներ:

Անհրաժեշտ է նշանակել պատասխանատու, որի պարտավորությունների մեջ կմտնի հակահրդեհային միջոցառումների կիրառումը:

10. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ /ԲԿՊ/

Նախատեսվող գործունեության շինարարությանը և շահագործմանը ներկայացվող հիմնական պահանջների թվում է ապահովել մարդկանց առողջության համար բարենպաստ պայմաններ և շրջակա միջավայրի որակի նորմատիվային պահանջները: Դրանք են.

- Պահպանել մթնոլորտային օդը, մակերևութային և ստորերկրյա ջրերը, հողն ու ընդերքն աղտոտող վնասակար նյութերի առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաների սահմանները.
- Չգերազանցել վնասակար նյութերի սահմանային թույլատրելի խտությունները արտանետումներում և արտահոսքերում.
- Չգերազանցել աղմուկի, վիբրացիայի, էլեկտրամագնիսականության, ռադիացիոն ճառագայթման և այլ ֆիզիկական ազդեցությունների սահմանային թույլատրելի մակարդակները.

- Պահպանել հողերի գոտևորման ռեժիմները, քաղաքաշինական կանոնները, գյուղատնտեսական հողերի պահպանության կանոնները, սանիտարական պաշտպանիչ գոտիների սահմանված չափերը.
- Բարելավել բնակչության և նրա առանձին խմբերի սոցիալական, առողջական վիճակը բնորոշող ցուցանիշերը:

Այս նորմատիվները պահպանելու դեպքում համարվում է, որ նախատեսվող գործունեությունը չի խախտում բնական հավասարակշռությունը: Դրան հասնելու համար նախաձեռնողը ներկայացնում է բնապահպանական և սոցիալական մեղմման միջոցառումների պլան: Բնապահպանական և սոցիալական մեղմման միջոցառումները, պատասխանու կատարողներով, անհրաժեշտ ծախսերով բերված են սույն հաշվետվության բնապահպանական կառավարման պլանում /ԲԿՊ/:

“Արփիմեդ” դեղագործական գործարանի շինարարության և շահագործման բնապահպանական կառավարման պլան

Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Ժախսերը, հազ.դրամ	Պատասխանատվությունը	
				Կատարող	Վերահսկող
<i>Նախապատրաստական փուլ</i>					
Ելակետային վիճակի ուսումնասիրություն	Զրոյական ազդեցություն	1/ Մերձակա տարածքների մթնոլորտային օդի որակի հետազոտություն 2/ Հայցվող տարածքից ցածր նիշերում մակերևույթային ջրերի որակի հետազոտություն 3/ Շինարարության տեղանքի և շրջակայքի բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրություն 4/ Շինարարության տեղամասերի հողածածկի ուսումնասիրություն, բերրի հողի շերտի հզորության չափում 5/ Շինարարության տեղանքի և մերձակա տարածքի ռադիացիոն ֆոնի և աղմուկի մակարդակի չափում 6/ Շինարարության տարածքում պատմամշակութային և բնական հուշարձանների առկայության ստուգում	500,0	„Արփիմեդ,, ՄՊԸ կամ կապալառու կազմակերպություն	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
<i>Շինարարության փուլ</i>					
Ի. „Արփիմեդ,, դեղագործական գործարանի շինարարություն	1. Մթնոլորտային օդի վրա ազդեցություն ա/փոշու արտանետում բ/ դիզ. շարժիչների ծխազագեղի վնասակար նյութերի արտանետում գ/ աղմուկ	ա/ Աշխատանքները կատարել հնարավորինս խոնավ եղանակներին: Չոր եղանակներին ջրել աշխատանքային հրապարակները: բ/ Տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում, ենթարկվեն պլանային տեխնիկական ստուգումների: Դիզելային շարժիչները ցանկալի է ունենան վնասակար նյութերի կլանիչներ; գ/ Տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում, ունենան սարքին խլացուցիչներ: Աղմկոտ աշխատանքները կատարվում են ցերեկային ժամերին: Անհրաժեշտության դեպքում կառուցվում է աղմկապաշտպան վահաններով ցանկապատ: ա/ Տեխնիկատրանսպորտային միջոցները պետք է	Կապիտալ ծախսերի շրջանակում	„Արփիմեդ,, ՄՊԸ և կապալառու կազմակերպություններ	„Արփիմեդ,, ՄՊԸ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին ԱԻՆ Առողջապահության նախարարություն

Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Ծախսերը, հազ.դրամ	Պատասխանատվությունը	
				Կատարող	Վերահսկող
